

ԼԵՅՍ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ Ս. ԳՐԱՅԻՆ
ՊԼՇՏՈՆԱԿԱՆ ԵՐԿԱՄԱՆԹԵՐԹ
ԳՆԱՏԱՆՅԻ ՀԱՅՈՑ ԸՈՒՋՆՈՐԳՈՒԹԵԱՆ



LUYS — Revue bimestrielle

Prélature Arménienne du Canada

Rédacteur : Papken Topjian

3401 Olivar-Asselin, Montréal, Qc. Canada H4J 1L5

Tél.: (514) 856-1200 • Fax : (514) 856-1805

Courriel : prelacy@armenianprelacy.ca



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԳԻՒՏ ԽԱՉԻ

Զարեհ Արք. Ազնաուրեան

ՀԱՅ ԼԵԶՈՒՆ՝ ՄԵՐ ԹՈՒՐ ԿԵԾԱԿԻՆ

Վարուժան Արք. Հերկելեան

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ

ԳԵՐԾ. Տ. ՎԱՐՈՒԺԱՆ ԱՐՔ. ՀԵՐԿԵԼԵԱՆԻ

Կորիւն

ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ՃԱՄԲՈՎ՝
ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Գառնիկ Բ. Գ.

՝FOR A CHURCH BEYOND ITS WALLS՝

Բաբգէն Թօփճեան

ՀԱՅ ԲԺԾԿՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ԴԱՐԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ
19-ՐԴ ԴԱՐՈՒ ՍԿԻԶԲԸ

Բժ. Կարպիս Հարպոյեան

ԳԻՏ ԽԱՉԻ

«Զոր հրէիցն ծածկեալ զանթաքչելի զգանձն,
փափաքմամբ թագուհուոյն փայտ կենաց յայտնեցաւ»:
Շարական

Այսօր մեր եկեղեցւոյ սրբազան կամարները անգամ մը եւս թնդացին ու-
րախ եւ վեճ հնչելուններովը այսօրուան յատուկ շարականներուն, որոնք մեզի
կը բերէին աւետիսը Փրկչական կենարար Խաչի գիւտին, եւ փառքը անոր՝
մեռեալ պատանիին յարութեան հրաշալի դրուագին ընդմէջէն: Խաչը այսօր
կրկին կը դառնայ մեր ուշադրութեան կեդրոնը, իր վրայ կ'ամփոփէ ու կը
կեդրոնացնէ մեր մտածումները. եւ բնական երեւոյթ մըն է ասիկա, որովհետեւ
նիւթական այս աշխարհին մէջէն մեր Տէրը որպէս նիւթական գոյութիւն զայն
միայն թողուց մեզի:

Քրիստոսի համբարձումէն ետք հաւատացեալներ իրենց անմխիթար վի-
ճակին մէջ կրցան գիւտը ընել խաչին կառչելու գաղափարին: Խաչեալին տեղ՝
Խաչը: Եւ, ահաւասիկ, մարդիկ փրկութեան որպէս շօշափելի դրաւական եւ
յաղթանակի որպէս անխորտակելի գէնք ընդունեցին խաչը, եւ զայն մի՛շտ
ունեցան իրենց մտքին ու հոգիին մէջ, իրենց շրթներուն վրայ եւ կուրծքերուն
վրայ կախուած:

Սակայն մարդիկ չգոհացան միայն Խաչին ներշնչած գաղափարովը եւ
պարզեւեւ հոգեկան ոյժովը, այլ ուղեցին գտնել բուն իսկ խաչափայտը, որուն
վրայ էր բարձրացած Աստուածորդին՝ փրկագործութեան որպէս գերագոյն գոհ:
Բայց Խաչը առաջին իսկ օրէն անհետացած էր. հրեայ քահանայապետներ ու
իշխաններ կամենալով ի սպառ մոռացութեան մատնել Յիսուսի անունը, ջա-
նացած էին ոեւէ յիշատակ չթողուլ անկէ. այդ պատճառով ալ, թաղել տուած
էին խաչափայտը Գողգոթայի մօտ գտնուող աղբիւսներուն տակ:

Քրիստոնեայ հաւատացեալներ չէին համարձակեր Խաչը փնտռելու
ձեռնարկել, որովհետեւ քրիստոնէութեան դէմ խիստ հալածանք մըն էր ծա-
ւալած Հրէաստանի մէջ. այնքան, որ նոյնիսկ արգելուած էր արտասանել
Քրիստոսի անունը:

Այսպիսի պայմաններու ներքեւ, ահա, Խաչը մնաց թաղուած աղբակոյ-
տերու տակ, մինչեւ 327 թուականը, երբ Կոստանդիանոս կայսեր մայրը՝ Հե-
ղինէ, ուղեց անպայման կերպով երեւան հանել Քրիստոսի արեամբ սրբա-
գործուած խաչը: Եկաւ Երուսաղէմ, երկար ատեն հարցապնդումներ կատա-
րեց, մինչեւ որ օր մը յաջողեցաւ թաքստոցին գիտակ Յուդա անուն հրեայ մը
խօսեցնել եւ իմանալ վայրը: Անհուն ուրախութեամբ լեցուած, Հեղինէ Տիկին
անմիջապէս մաքրել տուաւ աղբիւսները, որոնց մէջէն երեւան եկան երեք
խաչափայտեր. անոնցմէ մէկը Փրկչականը պիտի ըլլար, իսկ միւսները՝ երկու
աւագակներունը: Բայց ինչպէ՞ս հասկնալ թէ որն է անոնցմէ Փրկչականը:
Այս անելին առջեւ էին, երբ տեսան յուղարկաւորներու տխուր թափօր մը, որ

կ'անցնէր անկէ: Յանկարծ նոր գաղափար մը փայլատակեց անոնց մտքին մէջ: Այն ինչը, որ սրբուած էր Յիսուսի արեամբ, անշուշտ պիտի ունենար կենարար ու կենդանացուցիչ ոյժ եւ կարողութիւն: Կեցուցին յուղարկաւորներու թափօրը, վերցուցին մեռեալ պատանին եւ կարգով մօտեցուցին գտնուած խաչափայտերուն. եւ երբ անկենդան մարմինը դրին երրորդ խաչին վրայ, մարդիկ զարհուրախառն հիացմամբ դիտեցին թէ ինչպէս կեանքի կոչուեցաւ մեռեալ պատանին:

Այսպէս, ահա, ինչը վերջնականապէս պարպուեցաւ իր հին իմաստէն, դադրեցաւ մահու գործիք նկատուելէ եւ զգեցաւ նոր իմաստ. մերկացաւ առիթ մահու կոչումը եւ վերակոչուեցաւ փայտ կեանաց, որո՛վ մահացու բնութիւնը յաղթուեցաւ: Խաչը ինք դարձաւ փրկիչ, եւ իրմով կատարուեցան այնքան հրաշքներ, որոնցմէ առաջինն էր միայն պատանիին յարուցիւնը:

Քրիստոնեայ պատմութեան մէջ խաչը եղաւ դրօշը յաղթութեան եւ զէնն անվթար՝ ընդդէմ հակառակամարտին: Ան դարձաւ այն զինանշանը՝ զոր Կոստանդիանոս Մեծ դրոշմել տուաւ իր ամբողջ բանակին զէնքերուն վրայ, որուն շնորհիւ միայն կրցաւ ապահովել յաղթանակը: Եւ, ի վերջոյ, ինչը եղաւ առարկայ յարգանքի եւ պաշտամունքի, գերագոյն՝ Աստուածային գոհագործումի միջոց եւ փրկութեան առիթ ըլլալուն համար: Մարդիկ զայն նկատեցին «ապաւէն եւ յոյս հաւատացելոց»։ Իրենց կեանքին մէջ միայն անո՛ր վստահեցան եւ անով զրահուեցան՝ կրցան հասնիլ յաղթանակին:

Երբ պահ մը կ'անդրադառնանք այս ճշմարտութեանց, անմիջապէս մեր միտքը կ'երթայ դէպի անցեալ էջերը Հայ պատմութեան, ու մենք հարց կուտանք մեզի. աշխարհի մէջ ո՞ր մէկ ազգը աւելի հաւատարիմ եւ աւելի կապուած մնաց ինչին, քան մեր ազգը: Հայ ժողովուրդը առաջին իսկ օրէն գիտցաւ արժանի յարգանքն ու պաշտամունքը ընծայել անոր, անոր մէջ տեսնելով իր փրկութեան եւ գոյատեւման մեծագոյն կռուանը, զոր մի՛շտ կրեց իր հօգիւն մէջ եւ իր ուսերուն վրայ, այդպէս քալելով մեր պատմութիւնը կազմող խաչի՛՝ ճամբայէն: Գողգոթանե՛րը շարունակուեցան, բայց մեր ժողովուրդը տեղի չտուաւ այդ լեռնացած դժուարութեանց առջեւ. եւ այդ բոլորը անոր համար, որ երբե՛ք իր աչքերը չհեռացուց ինչէն եւ մի՛շտ հաւատաց որ անո՛վ միայն պիտի գտնէ իր փրկութիւնը:

Սակայն Ի. դարու մեր այսօրուայ կեանքին մէջ մենք նոյն վստահութեամբ եւ նոյն կրօնական երկկեղածութեամբ չենք մօտենար ինչին, որովհետեւ տկարացած է մեր մէջ հաւատքը՝ դէպի ինչն ու ինչեալը: Ինչին մէջ չենք տեսներ մեր ապաւէնը, չենք տեսներ անոր փրկարար եւ կենդանացուցիչ ոյժը, որովհետեւ անոր կը մօտենանք նիւթական չափանիշներով, որովհետեւ անոր կը նայինք մեր նիւթական աչքերով եւ ոչ հոգևոյ հայեցողութեամբ, ինչպէս պիտի ընէր ճշմարիտ քրիստոնեայ մը:

Այսօր մենք հեռացած ենք ինչին քառաթեւ հովանիէն, անտեսելով անոր մէջ գտնուող անթափէլի գանձը. մեր դէմքը փոխանակ անկէ բղիտող լուսոյ ցայտադբիւրին դարձնելու, շրջած ենք մեր երեսները, կամաւոր ուրա-

ցուլթեամբ մը կարծէք, որովհետեւ յաճախ մեր գործերը խաւարային են...Մտքէ հանած ենք զայն որպէս «յոյս եւ ապաւէն», եւ մեր վստահութիւնը դրած ենք նիւթական կորնչական գանձերու եւ խախուտ հաստատունութեանց վրայ, որոնք Նայի Մարգարէի բացատրութեամբ կը նմանին ջախջախեալ եղէգներու, որոնց վստահող ու թիկունք տուող մարդիկը անպայման կերպով կը գահավիժին ու կը կործանին անկանգնելիօրէն:

Տակաւին, մեր խիղճը ծանրաբեռնած ենք բազմազան մեղքերով, մեր միտքն ու հոգին լեցուցած մեղսալից խորհուրդներով, ու մեղքի այդ ահաւոր աղբակոյտերուն տակ թաղած ենք մեր Փրկչին Ս. Խաչը. եւ հակառակ անոր որ կը գիտակցինք այս իրողութեան, դեռ կը դանդաղինք ու չենք փութար մեր ներքին աշխարհին մէջ կատարելու նոյն այն գեղեցիկ գործը, զոր կատարեց Հեղինէ Տիկին, քրիստոնեայ աշխարհին պարգեւելով կենաց փայտը:

Երբ այսօր կը տօնենք յիշատակը Խաչի գիւտին, բոլորս ալ կը հրաւիրուինք նոյն Խաչին հովանիին տակ, կը մղուինք մաքրելո՛ւ մեր մտքերն ու հոգիները, քանի ժամանակը դեռ մեր ձեռքն է: Սրբելո՛ւ մեր խիղճը, որպէսզի մեր մէջ ալ յայտնուի մեղքի տիղմին տակ թաքնուած անթափ չելի գանձը, եւ մենք մաքրուած ու պայծառացած անոր ցօղած իմացական լոյսովը, վերածնինք իր կենդանացուցիչ ոյժովը եւ վերստեղծենք մեր մէջ պատկերը սկզբնատիպ անաղարտ մարդուն, որուն մէջ կը ցոլանայ պատկերը Աստուածութեան, ի պատիւ եւ ի փառաբանութիւն անուան իւրոյ. ամէն:

Զարեհ Արք. Ազնաւորեան



ՀԱՅ ԼԵԶՈՒՆ՝ ՄԵՐ ԹՈՒՐ ԿԵՃԱԿԻՆ

«Լեզու մը քաղաքակրթությունն մըն է
ու կը փաստէ մտքի դրությունն մը»
Յակոբ Օշական

Լեզուի մասին երբ կը խօսինք, ըլլայ «լեզուի տարի»ի ընթացքին կամ անկէ դուրս որեւէ առիթով, լեզուն ճիշդ չէ որ նկատի ունենանք լոկ որպէս հաղորդակցութեան միջոց մը, այլ որպէս հոգեղէն արտայայտութիւն մը, որ իր դրոշմը կը դնէ ինքնուրոյն մշակոյթի մը, ինչպէս Օշական կը հաստատէ քաղաքակրթութեան մը վրայ: Ան քաղաքակրթութեան մը արտայայտութիւնն է, որ երբ լռէ, կը լռէ այդ քաղաքակրթութիւնը:

Ճարտարապետական կոթողներ, երաժշտական գլուխ գործոցներ կը քարանան երբ կտրուի լեզուն: Ահա թէ ուր է ահաւորութիւնը ցեղասպանութեան, որուն գլխաւոր ձգտումն էր կտրել կենդանի լեզուն: Ազթամարի Ս. Խաչը, Մշոյ Ս. Կարապետը, Անիի տաճարները կրնան մնալ, բայց կը մնան որպէս անխօս, քարային կամ թանգարանային կառոյցներ, երբ հնչող լեզուն կը բացակայի անոնց մէջ: Նոյնն է պարագան Արարատին:

Ժողովուրդ մը, կամ մարդկային զանգուած մը կը զատորոշուին իրենց լեզուով եւ միութիւն մը կը կազմեն նոյն այդ լեզուով: Եւ ուրիշ ժողովուրդներ կամ մարդկային զանգուածներ, առաջին հերթին, այդ նոյնալեզու զանգուածը կը զատորոշեն իր լեզուով:

Ժողովուրդ մը ճանչնալը խոր թափանցում կը պահանջէ: Եւ ոչ միայն թափանցում, այլ ճշգրիտ հասկացողութիւն: Թուրքը, թող ներուի ինծի, եթէ ըսեմ որոշ չափով ճանչցաւ մեր ժողովուրդը եւ ըստ այնմ առաւ իր աւելու որոշումը: Այո, աւելու, որովհետեւ չկրցաւ ճանչնալ այդ ժողովուրդի իսկութիւնը եւ այդ պատճառով ալ չկրցաւ արմատէն կտրել ցեղ մը, որուն արմատները ինք չէր գիտեր թէ ուրեր են թաղուած: Աւելի քան մէկ ու կէս միլիոն զանգուած մը քանի մը ամիսներու ընթացքին գետնամոյն եղաւ: Մնացորդացը սակայն, շնորհիւ իր լեզուին, յանկարծ գլուխը վեր ցցեց հողի տակէն ու այսօր աղաղակող փաստ մըն է աշխարհի վրայ եւ անհանգստացնող աղաղակ մը եթէ կ'ուզէք: Ուրիշ զանգուած մը, ճիշդ է որ փրկուեցաւ սպանդէն, բայց մնաց զանգուած, ուրիշ զանգուածներու մէջ շաղուած: Այդ զանգուածը իր գոյութիւնը փաստելու համար պէտք ունի լեզուին, այլապէս անոր գոյութիւնը շփոթութիւններ կ'առթէ եւ հետզհետէ կը խամրի:

Յրանսացի ակադեմիականը՝ Փիէռ Լոթին չէր ճանչցած հայը, հակառակ իր արտայայտութիւններուն այդ ցեղին մասին: Ան իր ցանկութիւններուն յագուրդ կուտայ հայատեաց իր լողունգներով: Հայերը անհամակրելի են, հայր որդ է եւայլն: Բացայայտ է որ Սուլթան Ապտիւլ Համիտի խորտիկները, գինին եւ շքանշանը կը խօսին իր բերնով:

Անգլիացի Միջին Արեւելքի պաշտօնակատար, Արաբիոյ Լորանս անու-

նով ծանօթ՝ Թոմաս Լորենս, պէտք է ըսել, որոշակիորէն մօտէն, խորքէն կը ճանչնայ մեր ցեղը: Ան երբ կ'ըսէ հայերը անտանելի են, հայատեաց չէ: Հայերը արմատախիլ ընելու իր միտքը կուգայ վախէ մը, այն վախէն, որ օր մը հայեր երբ «ազատ իշխանութիւն ձեռք բերեն երկրագունդի որեւէ անկիւնի վրայ, ամբողջ մոլորակին տէր կը դառնան ե՛ւ կ'աշխատցնեն մնացեալ մարդկութիւնը: Այդ է, որ գիտեն թուրքերը եւ կը սարսափին, եւ յոյներն ալ եւ... մենք բոլորս, որ կը ճանչնանք գիրենք»...

Նման միտքեր եւ առջեւ նետուած գաղափարներ, համաշխարհային Ա. պատերազմի նախօրեակին, անշուշտ որոշակի պատճառ հանդիսացան ցեղասպանութեան, որ կիսատ մնաց, որովհետեւ «թուրքերը պէտք չէ ընեն այդ գործը, անոնք կոպտօրէն պատրաստ են ատոր» բայց «երբ հայեր սպաննելու իրենց գեղագիտական հաճոյքը յագենայ, ձեռք կը քաշեն»: Կը հետեւի ուրեմն, որ հայութիւնը չեզոքացնելու քաղաքականութիւն մը կար եւ անիկա կուգար անկէ, որ «Հայերը ամենախելացի, ամենակատարեալ, ընտրասերուած, ամենաբարձր զարգացած ցեղն են աշխարհի վրայ՝ քաղաքակրթութեան տեսակէտէն»: Յ. Օշականը, Ա. Չոպանեանը, Յ. Շիրազը կամ Արամ Կաթողիկոսը չեն այս խօսքերուն տէրը, այլ անգլիացի մը, որ կ'եզրակացնէ թէ այդ պատճառով հայութիւնը եւ Հայաստանը պէտք է անջատել իրարմէ:

Վստահ եմ որ Լորենս գովասանքի համար չ'ըներ այդ խօսքերը: Մենք կրնանք հպարտանալ նման խօսքերու դիմաց, որ նոյն ատեն փորձութեան կը տանի մեզ: Եւ մենք փորձութեան մէջ ենք արդէն ամենուրեք, երբ մենք մեզմէ կը պարպուինք: Ուրիշներ կ'ըսեն նահանջի մէջ ենք: Ըսելու ձեւերը կարեւոր չեն, իրականութիւնն է որ լախտի պէս կախուած է մեր գլխուն վերեւ: Ահա ասկէ կը սկսի լեզուի մասին մեր խօսքը: Ինչո՞ւ լեզուն...

Որովհետեւ լեզուն է մեզ օղակողը եւ նոյն լեզուն՝ մեզ որպէս մէկ օղակ պահողը: Մեր հաւաքական միտքը համադրողը, մեր փորձառութիւնը յուշողը, մեզ արտացոլացնող հայելին: Այլապէս ոչ մէկը պիտի հետաքրքրուէր մեզմով: Իսկ այս դրութեան մէջ երբ կայսրութիւնները խնդրոյ առարկայ կը դարձնեն մե՛զ եւ ոչ այլ ընդարձակածաւալ զանգուածներ կամ ազգեր, բնականաբար մեր ականջներուն կը յուշեն արժէքի մը մասին որ մե՛րն է կամ մե՛նք ենք այդ արժէքը, եւ հետեւաբար զայն պահելը եւ փայլեցնելը մեր պարտականութիւնն է՝ աշխարհ մը թշնամիներու դիմաց: Իսկ այդ ծաւալուն թշնամիին դիմաց մեր սուրը մեր լեզուն է, մեր թուր կեծակին, ոչ թէ ուրիշին գլուխը կտրելու, այլ մեր գլուխը պահելու համար: Մենք մե՛զ ըլլալու համար: Հրեան իր գդակը ունի որպէս հովանի, մենք մեր լեզուն ունինք որպէս վահան եւ սուր: Աշխարհի մտահոգութիւնը որ մենք կը տիրենք աշխարհին, եւ կը ստրկացնենք այլազան ազգեր՝ այնքան ալ համոզիչ չի թուիր մեզի, անոնք պատրուակներ են՝ մեր պատմական եւ եւ հարուստ հողերուն տիրանալու: Թէ մենք կը շահագործենք երկրագունդը՝ դարձեալ շինծու յանցանք կը թուի մեզ: Բայց որ մենք կրնանք օրինակելի երկիր ունենալ, օրինակելի ազգ ըլլալ՝ տարակոյսէ վեր է, եթէ մենք մեզ մոռնալու ճամբէն ետ դառնանք եւ մեր

ակունքներուն եզերքը ապրինք ու սնինք մեր պապերու իմաստութեամբ եւ մեզ ճանչնանք մեր լեզուով, հազար լեզուի տէր ըլլալով հանդերձ: Այդ ձեւով մենք մեզ կ'ապահովենք միւս ջարդին դիմաց, որ կրնայ վերջնական դամբարանը հանդիսանալ մեր ժողովուրդին: Զուլումը: Մեր վրայ աչք տնկած աշխարհը գիտէ թէ այս ժողովուրդը մորթելով, իր նպատակին չի հասնիր: Հոսահոս կը մնան Ադամ մը եւ Եւա մը, ու կը տեսնես ազգը կրկին կը ծլարձակուի: Իրենց եզրայանգումն է ասիկա եւ ոչ մերը:

Կը հետեւի ուրեմն, որ մենք հարկադրանքին տակն ենք որոնելու միջոցները, որոնց պաշտպանութեան պէտք ունինք: Որոնելու ազգակները, որոնց մէջ կ'արգելակուին այլասերման եւ ձուլման մանրէները: Գտնելու դարմանները, որոնք առաջը կ'առնեն վտանգաւոր հիւանդութեան աճուսին եւ տարածման եւ կամ կը կասեցնեն անոր ընթացքը:

Լեզուն ամենէն ազդու եւ հատու զէնքն է ինքնապաշտպանութեան:

Մանաւանդ մեր լեզուն, հայ լեզուն, որուն մասին ոսկեղէն վկայութիւններ ունին համաշխարհային ընտրանի գաւակներ: Որուն մասին գլուխ գործոց տողեր ձգած են մեր մտաւորականները ամէն շրջանի մէջ ապրած:

Լեզու մը որ հպարտութիւն կ'առթէ օտարին, ինչո՞ւ մենք պիտի ամչնանք զայն ամէն օր մեր շրթներուն վրայ պահելէն: Լեզու մը որ մեր ժողովուրդի ընտրանիին փայփայանքի առարկան եղած է դարերու ընթացքին, ի՞նչը այսօր կը մղէ մեզ, որ նոյն գիտակցութեամբ եւ նոյն ոգիով չմօտենանք անոր, նոյն գուրգուրանքով ու հոգածութեամբ չվարուինք անոր հետ:

Հպարտանան թող մեր ծնողները, որ իրենց գաւակը քանի մը լեզուներ կը խօսի, միեւնոյն ատեն սակայն ամչնան թող մեր ծնողները, որ իրենց գաւակը իր մայրենի լեզուն չի գիտեր, չի խօսիր: Մենք մեզմով հպարտանալու իրաւունք ունինք: Սակայն մենք մեզմէ ամչնալու գիտակցութիւնը եւս պիտի ունենանք որ չսխալինք, առնուազն խրտչինք սխալելէ: Վստահաբար հոս կը կայանայ մեր հաւաքական առողջութիւնը: Ինքն իրմով ապրիլը եւ գոհանալը իրաւունքն է բոլորին, սակայն ինքն իր մէջ ճահճանալը՝ յանուն փայլուն եւ հանգստաւէտ առօրեայի մը՝ կ'ապացուցէ նսեմութիւնը հոգիներուն, որմէ հեռու պէտք է մնայ միլիոնաւոր նահատակներու տէր ժողովուրդը: Ժողովուրդ մը, որուն բոլոր ընտանիքները ունին իրենց նահատակները... Զանգուածային նահատակութեան ընթացքին, անապատի աւազներուն վրայ կըքած եւ չորցած մատներով այբուբեն գրելու փորձը մահամերձ մօր, հայ մօր յայտնութիւնը աստուածաշնչային խորք ունի եւ որպէս այդպիսին պէտք է մօտենալ անոր: Ոչ հաց, ոչ ջուր՝ այլ մայրենի լեզու: Ինչո՞ւ, մեռնողը ի՞նչ պիտի ընէր լեզուն: Լեզուն ի՞նչ պիտի ընէր մեռնողին: Տեղւոյն վրայ պէտք է փնտռել խորունկ իմաստը հայ մօր այդ պատկերին: Մարգարէն էր այդ մայրը, տեսանողը, որ իր մեռնող ցեղի ապագան կը գուշակէր: Հեռաւոր արշալոյսը, որուն ճառագայթներն էին մայրենի լեզուին տառերը: Հայ մայրը այդ պատկերով կը տեսնէր, որ ցեղը չի մեռնիր, պիտի չմեռնի եաթաղանի, հրագէնի կամ սովի միջամտութեամբ: Հայ մայրը լեզուի ճամբով կը նախատեսէր ցեղին վերածնունդը: Բայց

այդ ծնունդը ի հարկ է, հայ մայրը կը տեսնէր երկրի վրայ, մայրենի հողին վրայ, որ պիտի գլացուէր իր ցեղին: Երկիրը պիտի մնար իր տեղը, իսկ վերածնող ժողովուրդը պիտի գոյարներ այլ վայրի մը, կամ վայրերու մէջ: Հոս է որ սկիզբ առաւ երկրորդ եւ աւելի արմատական ողբերգութիւնը մեր ցեղին: Թուրքը աւելց մեր ոստերը, այժմ կը խորտակուին մեր արմատները: Ահա թէ ինչու նահանջը լեզուին, բարքին, հայկականութեան: Իրենց հողէն անջատուած մայրեր են որ կը կազմեն այսօրեայ մեր նոր բայց կաղացող ընտանիքը եւ այդ իսկ պատճառով, այդ ընտանիքը առաւել ուշադրութեան առարկայ պէտք է որ ըլլայ: Ինչո՞վ կարելի է փոխարինել հողը: Մենք, Սփիւռքի մէջ դասնք կերպը հոգեւոր հայրենիք մը ստեղծելու եւ անոր տեսլականով կենդանի պահելու հայրենիք հասկացողութիւնը: Կը հետեւի ուրեմն, որ մենք նոյն օրինակով պիտի ձեւաւորենք հոգեւոր ընտանիքի մը կերպարը եւ անոր հունով պիտի կազմենք մեր նոր ընտանիքը իր նոր ձագերով:

Ըսել թէ ընտանիքը կը թերանայ, դպրոցը կը թերանայ, եկեղեցին կը թերանայ կամ նոյնիսկ պետութիւնը կը թերանայ բան չի փոխեր կացութեանէն, պղտորած ջուրը պիտի շարունակէ պղտոր հոսիլ: Անհրաժեշտ է կասեցնել նահանջը նոր մեթոտներով, նոր յանձնառութիւններով, նոր զոհողութիւններով՝ ընտանիքի նոր կերպարի մը կազապարումով:

Այս աշխատանքին պէտք է լծուին մեր մանկավարժները, մեր արուեստագէտները, մեր լեզուաբանները, մեր հոգեբանները, մեր բանաստեղծները այնպիսի յայտագիր մը պատրաստելու, որ հայ նոր մայրը արդէ միջոցներով ի վիճակի ըլլայ գայն կեանքի կոչելու իր նոր փթթող զաւկին կամ զաւակներուն առաջին քանի մը տարիներու քայլերը ուղղելու: Հայ երեխան պէտք է կազմաւորուի այդ կազապարով: Եթէ մայրը, մեր ուշացումին պատճառով ի վիճակի չէ, այսինքն, ինքը հայերէն չի գիտեր կամ խառն ամուսնութեան բերումով օտար է, գայն այդ ուղղութեամբ վարժեցնելու պարտականութիւնը եւս կ'իյնայ մեր ուսերուն: Այնուհետեւ մեր վարժարանները կը շարունակեն իրենց պարտականութիւնը դպրոցական արդիական ծրագիրներով եւ յատուկ ուղղութեամբ: Դժուար է անշուշտ այս աշխատանքը, մանաւանդ որ կը նախըզգանք որ մեր նոր ընտանիքի սիւները, ծնողները իրենք փախուստ պիտի տան, սակայն էականը հարիւր առ հարիւր յաջողութիւնը չէ, որոշ տոկոսի մը փրկութիւնը կ'ապահովէ աւագին վրայ գրող հայ նահատակ մօր տեսլականը:

Ասոր յարակից, յատուկ դասագիրքերով եւ եթէ յարմարութիւն ըլլայ, յատուկ դասընթացքներով պէտք է նախապատրաստել մեր երիտասարդն ու երիտասարդուհին արդիական միջոցները լաւագոյնս օգտագործելով: Զգոյշ ըլլալ որ անոնք փախուստ չտան եւ քանի մը ամիսներ տրամադրեն նման դաստիարակութեան իրենց տուններէն ներս համակարգիչի օգտագործումով կամ տուններէն դուրս յատուկ կեդրոններու մէջ աւելի կենդանի միջոցներով:

Մենք գէնքը ունինք, վահանը ունինք, կը մնայ որ զանոնք լաւագոյն կերպով օգտագործելու կերպարը գիտնանք, որ խուսափինք նոր ձեւի ջարդէն, նոր ձեւի ցեղասպանութեանէն, որ անպայման նախատեսուած էր բոլոր անոնց


մտքին մէջ, որոնք կանխամտածեցին, ծրագրեցին եւ գործադրեցին առաջին ցեղասպանութիւնը սպաննելով որքան որ կրնան իսկ միւսները աւելելով մայր հողէն, գանոնք չպրտելով օտար ու անբարեյոյս հողերու վրայ:

Միշտ մեր ձեռքին պատրաստ ըլլայ մեր թուր կեծակին:

Այլապէս մահացու եօթը մեղքերուն վրայ պիտի աւելնայ ութերորդը՝ ուշացումով եւ մասամբ նորին:

Նիկոսիա

Վարուժան Արք. Հերկելեան



*Վարուժան Արք. Հերկելեան եւ Խաժակ Արք. Յակոբեան
Մոնթրէալ, 24 Օգոստոս 2007*

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ

Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկելեանի համար

Գանատայի Ազգային Առաջնորդարանի նախաձեռնութեամբ Ուրբաթ, 24 Օգոստոս 2007-ի երեկոյեան ժամը 8.00-ին, Մոնթրէալի Հայ Կեդրոնի Ա. Ահարոնեան սրահին մէջ կազմակերպուած էր Մեծարանքի Երեկոյ մը ի պատիւ Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկելեանի (Կաթողիկոսական Փոխանորդ Կիպրոսի Հայոց Թեմին) Քահանայական Օծման 40-ամեակին առիթով:

Երեկոն ունէր երկու բաժին. մտաւորական հացի, այսինքն՝ իմացական-գեղարուեստական յայտագրի մը, եւ ապա ընթրիքի:

Ձեռնարկին կը նախագահէր Գանատայի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեան, եւ յորեկար սրբազանի կողքին ներկայ էին Սպահանի (Իրան) Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Բաբգէն Եպս. Չարեան եւ Գերշ. Տ. Սուրէն Արք. Գաթարոյեան (Հոգեւոր Տեսուչ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ): Հրաւիրուած էին եկեղեցական եւ ազգային ներկայացուցիչներ, եւ Վարուժան սրբազանին մտերիմ շրջանակ մը:

Երկու նամակներ հասած էին. մէկը Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոսէն, իսկ միւսը Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Օշական Արք. Չորոյեանէն:

Վեհափառ Հայրապետը գրած էր. «Ամեակները առաջին հերթին առիթներ են անցեալին նայելու ու ապրուած կեանքը ու կատարուած գործը արժեւորելու: Հոգեւորականին կեանքը ու գործը ուրիշ բան չի կրնար ըլլալ եթէ ոչ ինքնընծայում՝ գերազանցօրէն ու ճշմարտօրէն. այն բոլոր արժէքներուն ու իտէլաներուն համար, որոնք կը կազմեն էութիւնը քրիստոնէական եկեղեցւոյ: Այսպէ՛ս ըմբռնեց ու ա՛յս յանձնառութեամբ իր կեանքի քառասուն տարիները ապրեցաւ Վարուժան սրբազան, ընդհանրապէս մեր եկեղեցւոյ ու մասնաւորաբար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հաւաքական կեանքին ու առաքելութեան մէջ»:

Օշական սրբազան գրած էր. «Արդարեւ Վարուժան արքեպիսկոպոս այն հաւատաւոր հոգեւորականն է, որ իր ծառայութեան 40 տարիները լրիւ նուիրած է Հայ Եկեղեցւոյ եւ ժողովուրդին, Կաթողիկոսարանէն ներս թէ թեմական պաշտօններու ճամբով: Պարզունակ՝ միեւնոյն ատեն խորաթափանց, համեստ՝ միեւնոյն ատեն տիրական եւ յանդուգն, մտածումներու թուիչքով աուլցուն եւ գրական տաղանդով հարուստ հոգեւորական մըն է ան...»:

Յայտագիրը վարեց Լաւալի Ս. Գէորգ Եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Հրայր Ա. Քհնյ. Նիկողեան: Ան բացման հակիրճ խօսքէ ետք հրաւիրեց Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հովիւ՝ Գերպ. Տ. Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեանը:

Գերապատիւ Հայր սուրբը ներբողական ոճով տուաւ յորեկար սրբազանին կենսագրականը:

Հայր Մեղրիկ Վարուժան սրբազանը նախ ներկայացուց որպէս «Բարի եւ

ազնիւ ծառայ Յիսուսի Քրիստոսի» եւ «Բարի եւ ազնիւ սպասուոր Հայկազնեան ազգին»։ Ապա անոր յատկանիշները վեր առաւ. այսպէս՝ խօսեցաւ մարդուն մասին, եւ ըսաւ՝ «Իրեն համար չկան մարդկային դասակարգեր», ան «ուրիշները կը բարձրացնէ, որպէսզի ինք կարենայ բարձրանալ»։ խօսեցաւ Հայ եկեղեցականի եւ հոգեւորականի ցայտուն տիպարին մասին, եւ ըսաւ՝ «Իրեն համար եկեղեցական կամ հոգեւորական ըլլալ չի նշանակեր մարդոցմէ դուրս եւ հետո ըլլալ, այլ ծառայութիւն մատուցել մարդկութեան»։ խօսեցաւ Հայ ժողովուրդի գոյութեան յաւերժացումին նախանձախնդիր ազգասէրին մասին, եւ ըսաւ՝ ան «հայրենիքին եւ հայրութեան համար իր կեանքը տալու գերագոյն գիտակցութիւնը ունի»։ խօսեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հաւատաւոր ծառային մասին, եւ ըսաւ՝ թէ ան Կաթողիկոսութեան անայլայլ եւ «գինուորեալ միաբանն է»։ խօսեցաւ Հայ ընտանիքի (թէ պարզ հասկացողութեամբ, եւ թէ՛ ընկերային) բարոյական ամրութեան ջատագովին մասին, եւ ըսաւ՝ ան «Առանց ընտանիքին չի կրնար ապրիլ։ Առանց իր հարազատները տեսնելու չի կրնար շնչել»։ եւ խօսեցաւ գիրի ու գրչութեան առաքեալին մասին ու ըսաւ՝ «Գիրը եղաւ իր կեանքն ու էութիւնը»։

Գերապատիւ Հայր սուրբի ելոյթէն հոք քաղցր երգեցողութեամբ բեմ բարձրացաւ պատանի Գաբրիէլ Արթինեան։ Նաեւ երգեց Արժանաշանորհ Տ. Հրայր։ Երգեցողութեանց ընկերացաւ Տիկ. Հուրի Պետրոսեան։

Ապա բեմ հրաւիրուեցաւ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Գառնիկ Քչնյ. Գոյունեան։ Տ. Գառնիկ յանձն առած էր ներկայացնել Յոբելեար սրբազանի մտաւորական ծառայութիւնը։ Ան իր ճառը վերնագրած էր «Ինքնաճանաչման նախապայման ճամբով՝ Միութեան համար»։

Ըստ Տէր հօր, սրբազանի մտաւորական գործունէութիւնը, որ ամբողջապէս խմբագրական վաստակ մըն է, ինքնաճանաչման աշխատանք է. թէ անհատական ինքնաճանաչման եւ թէ հաւաքական՝ իբր ժողովուրդ ինքնաճանաչման։ Ծառին ուղղութիւնը ցոյց տալ էր սրբազանի վաստակը՝ որպէս հաւաքական ինքնաճանաչման նուիրեալ։

Վարուժան սրբազան եղած է խմբագիր պարբերականներու եւ գրական ու աստուածաբանական գործերու։

Ան խմբագրած է «Այնճար» ամսագիրը, «Հասկ» ամսագիրը, «Արծիւ» կիսամսեան եւ «Գեղարդ» ամսագիրը։

Ան խմբագրած է Յ. Օշականի ծննդեան 100-ամեակին նուիրուած շարքին «Հրաշքը» քննադատական կալուածի երկխօսութիւնը եւ Հայ հին գրականութեան յատկացուած «Մեր Մատենագիրները» գիրքը։ Նաեւ՝ Յ. Օշականի կոթողական «Վկայութիւն» կոչուած «Համապատկեր»ի 10-րդ հատորը։ Վարուժան սրբազանի մէկ այլ կարեւոր իրագործումն է «Գառնի» մատենաշարը, որմէ ցարդ 37 գրքոյկներ լոյս տեսած են։

Ան խմբագրած է Ջարեհ Արք. Ազնաւորեանէն երեք գիրքեր. «Լոյս եւ Հաղորդութիւն», «Հայ Եկեղեցին 20-րդ Դարուն Եւ 21-րդ Դարու Շեմին» եւ

«Աստուածաշունչը եւ Մենք» հատորները:

Իր խօսքի վերջաւորութեան Տ. Գառնիկ բացատրեց, թէ յոբելեար սրբազանը խմբագրական աշխատանքով ուզած է, որ հաւաքական ինքնաճանաչման ընթացքը յանգի մեր ժողովուրդի մի ըլլալու գիտակցութեան ամրապնդման, եւ ըսաւ. «Սրբազանին համար հայութեան միութիւնը միայն սփիւռքահայութեան միութիւնը չէ, այլ եւ Հայաստանի ու Արցախի: Թէ՛ «Գառնի» մատենաշարը եւ թէ՛ «Արծիւ»ը այդ մասին ամենաընդարձակ ձեւով կը վկայեն: Ուրեմն, Վարուժան սրբազանի խմբագրական ճիգը մարգարէական փոխաբերութիւն-կոչ մըն է ի միութեան բերելու աշխարհացրիւ հայութիւնը, թէ՛ հայրենիքի մէջ եւ թէ՛ Սփիւռքի»:

Իր սրտի խօսքը արտասանեց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խածակ Արք. Յակոբեան, որ յոբելեար սրբազանին մասին վկայեց իբր բազում տասնամեակներու ընկեր եւ միաբանակից: Ան ցոյց տուաւ Վարուժան սրբազանի խոնարհ անձնաւորութեան մեծ արժանիքները եւ անոր անփոխարինելի նպաստը Հայ եկեղեցական եւ յատկապէս գիրի կեանքին մէջ:

Հուսկ բեմ հրաւիրուեցաւ յոբելեար սրբազանը, որ շնորհակալութիւն յայտնելէ ետք կազմակերպուած ձեռնարկին համար, ըսաւ. «Կեանքիս ամենէն դժուար պահերէն մէկն է, չեմ սխալիր եթէ ըսեմ՝ ամենէն դժուարը, ձեր յարգելի ներկայութեան հաշիւ տալու ոչ ձեզի, եւ ոչ ուրիշին՝ այլ իմ անձիս»: Ան իր ճիգերը հաշուեյարդարի ենթարկելէ վերջ, անդրադարձաւ Սփիւռքի ներկայ դրութեան եւ շեշտեց. «Սփիւռքը կարիքը ունի վերակազմակերպուելու ընկերային եւ քաղաքական նոր ոլորտներուն մէջ: ... Հին մեթոտներով նոր իրագործումներ եթէ անկարելի չեն, առնուազն նուազ արդիւնաւէտ են»: Ան կոչ ուղղեց վերանորոգեալ եղանակներով ստանձնելու Սփիւռքը:

Ապա Առաջնորդ սրբազանը յոբելեարին նուիրեց գեղեցիկ խաչապակի մը, որ գործն է արուեստագէտ Եղիա Պէքմէզեանի:

Ընթրիքի ատեն սրտաբուխ վկայութիւններ կատարեցին Գերշ. Սուրէն արքեպիսկոպոս եւ Պրն. Մհեր Գարագաշեան, եւ սրբազանի կեանքէն մանրավէպեր պատմեց Հովիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Վիգէն Ա. Քհնյ. Վասիլեան, որ հիւրաբար քաղաքս կը գտնուէր:

ԿՈՐԻԻՆ

ԻՆՔՆԱՃԱՆԱԶՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ՃԱՄԲՈՎ՝ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ա.

Վաստակ

Գանատայի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեան քանի մը ամիս առաջ թելադրած էր ինձի այս առիթին համար պատրաստել ամփոփ խօսք մը, որ ներկայացնէր Վարուժան Արք. Հերկելեանի (Կաթողիկոսական Փոխանորդ Կիպրոսի) մտաւորական ծառայութիւնը:

Սկիզբէն ըսեմ, թէ Վարուժան սրբազան շատ համեստ անձ մըն է, որ գովուելի չի սիրեր, նոյնիսկ գովուելէ չախորժիր: Ուստի, ես ալ զինք պիտի չգովեմ, այլ պիտի փորձեմ Մեսրոպ Մաշտոցին իր խոնարհ աշակերտութեան եւ հետեւորդութեան գլխաւոր քայլերը եւ «իմաստասիրութիւն»ը ցոյց տալ:

Դպրեմբանեցիներէ ոմանք կանուխէն ունեցած են եւ կ'ունենան գրող ըլլալու, եւ մանաւանդ բանաստեղծ ըլլալու երազանքը: Անհաւանական չէ, որ պատանի Պօղոս (Վարուժան սրբազանի նախկին անունը) ինք եւս նոյն պտոյտներուն մէջ եղած էր: Սակայն քահանայական իր օծումէն՝ 1967-էն ետք ստանձնած Վարդապետական աստիճանի համար թեզը («Մխիթար Գօշի Առակներու Թարգմանութիւն»)՝ մեզի կը պատմէ իմացական այլ հանգրուանի մը մասին, որ ինքնաճանաչման ցանկութեան արտայայտութիւն պիտի տայ իբր խմբագիր:

Ուրեմն, իր թեզը այդ ճանապարհին առաջին փոխաբերութիւն մըն է: Ինչպէ՞ս:

Թէ ո՞վ էր Մխիթար Գօշ:

12-րդ դարու «մեծիմաստն գիտութեամբ» դէմքերէն: Իր գրչին կը վերագրուին տասնեակ մը գործեր, որոնցմէ հռչակաւորը «Դատաստանագիրք Հայոց»ն է: Այդ գործերէն մէկն ալ առակներու շարքն է:

Առակը, գիտէք, ճշմարտութիւն մը կը յայտնէ, եւ կը միտի անհատական կամ ընկերային կեանքը գիտակցականացնելու, հաւատալով թէ ատիկա միջոցն է յոռին դէպի բարին փոխելու:

Ուրեմն, Վարուժան աբեղայ սկսելով թարգմանել Մխիթար Գօշի առակները, ինքզինք կը դնէր ծառայութեան մէջ կեանքը (անհատական եւ ընկերային) գիտակցականացնելու: Ասոր համար է, որ խօսքս վերնագրեցի «Ինքնաճանաչման նախապայման ճամբով...»: Ինքնաճանաչումը հասկնալով

Այս գրութեան արագ ներկայացումը կատարուեցաւ Մոնթրէալի Հայ Կեդրոնի Ա. Ահարոնեան սրահին մէջ, Ուրբաթ, 24 Օգոստոսին, Յոբելեար սրբազանին ի պատիւ կազմակերպուած ձեռնարկին առիթով: Խմբ.:

իրը ճանաչում անհատական եւ հաւաքական ինքնութեան: Ու զարմանալի չէ, որ «Արծիւ»ի առաջին թիւի խմբագրականին մէջ պիտի ըսէր.-

«...կարելիութիւնը չի պակսիր վերայառնելու, վերստի ուժեղանալու: Եւ ասիկա ինքնաճանաչումի պարտադիր նախապայմանով: Ինքնաճանաչումի ճամբով տեսնելու՛ւ, ընդունելու մեր ճշգրիտ իրավիճակը, ճշգրիտ իրապատկերը եւ ապա խոստովանելու զայն, որպէսզի մեր կողմէ կարելիութիւնը ընձեռուի մեզի՝ վերատեսութեան ենթարկելու մեր ընթացքը եւ զայն ըստ այնմ, փորձառաբար սրբագրելու եւ վերակերտելու ամրացած հիմքերու վրայ»: (3 Մարտ, 1994, Ա. Տարի, թիւ 1, էջ 1): Քիչ մը խիտ բանաձեւուած միտք մըն է ասիկա, որ հետեւեալը կ'ըսէ.-

Ինքնաճանաչումը շատ կարեւոր է. առանց անոր կարելի չէ ոտքի կենալ, առանց անոր կարելի չէ գորանալ: Թէ ինչո՞ւ: Որովհետեւ ինքնաճանաչումը նախապայմանն է տեսնելու, ընդունելու մեր իրական վիճակը եւ իրական պատկերը, ապա խոստովանելու զայն: Արդ, ինքնաճանաչումը, ըստ խմբագրին, ճամբայ մըն է, որուն յաջորդական փուլերն են. տեսնել, ընդունիլ եւ խոստովանիլ մեր իրական վիճակը եւ պատկերը: Այս փուլերը փորձառութիւն կու տան, որ կ'օգնէ ինքնասրբագրութեան եւ «ամրացած հիմքերու վրայ» վերակերտուելու:

Մէջբերումին մէջ երկու բառեր կան. իրավիճակ եւ իրապատկեր: Այս բառերը տարբեր բաներ կ'ըսեն: «Վիճակ» բառը կը վերաբերի պատմական, ընկերային եւ գոյութեանական կացութեան, իսկ «պատկեր» բառը՝ պատմական, ընկերային եւ գոյութեանական կացութեան անդրադարձումին եւ երեւակայումին: Մեր թէ պատմական, ընկերային եւ գոյութեանական կացութիւնը կոչուած ենք տեսնելու, ընդունելու եւ խոստովանելու, եւ թէ կոչուած ենք այն կացութեան անդրադառնալու, այսինքն՝ զայն մտածելու, եւ անոր ստեղծագործական մեկնաբանութիւն տալու (կացութիւնը երեւակայելը կը հասկընամ որպէս ստեղծագործական մեկնաբանութիւն): Առանց մտածումին եւ ստեղծագործութեան պիտի չկարենանք մենք մեզ ճանչնալ եւ վերակերտուիլ:

Այս կարճ բացատրականէն ետք, տեսնենք իր խմբագրական վաստակը:

Անիկա երկուքի կը բաժնուի.-

- 1.- Պարբերականներու եւ
- 2.- Գրական ու աստուածաբանական գործերու:

1.- Պարբերականներու խմբագրում:

Ան ստանձնած է երկու պաշտօնաթերթերու խմբագրումը.- «Հասկ»ի եւ «Գեղարդ»ի:

Առաջինը Կիւիկիոյ Կաթողիկոսութեան «Հասկ» ամսագիրն է, որուն խմբագիրի պաշտօնը վարած է 1980-88: Խմբագրումի այս փորձառութիւնը անշուշտ անհատական vision-ի մը գրեթէ չի հպատակիր, պարզապէս որովհետեւ հաստատութեան մը vision-ը հոն պէտք է մարմնաւորուի: Թէեւ այս աշխատանքը պաշտօն մըն է, սակայն անոր սիրով կատարումը կարելի է

յայտնութիւնն մը համարել ներքին ձգտումին՝ խմբելու եւ գրելու (այս երկու բառերուն շուրջ կարճ պիտի անգրագառնամ ելոյթիս երկրորդ բաժնով):

Այստեղ կ'ուզեմ նշել, որ «Հասկ»ին հետ խմբագրելու իր նայուածքը եւ ծանօթութիւնները լայնցուց ան:

(Ինչպէս հին ժամանակներուն, սկսելով Յարութիւն Քհնյ. Շմաւոն-եանէն, այսինքն՝ առաջին հայ պարբերականի խմբագրէն՝ մեր մօտ խմբագրումի աշխատանքը չէ կատարուած եւ դեռ չի կատարուիր զայն ընելու գիտութեան մէջ մասնագիտանալէ յետոյ: Մեր խմբագիրները եղած են եւ են գիրը սիրող կամ գրող անձինք, որոնք օր մը նախաձեռնած են պարբերական մը խմբագրելու, կամ կանչուած են կամ կը կանչուին այդ պաշտօնին, եւ ժամանակի ընթացքին որոշ ճարտարութիւն ձեռք կը ձգեն: Նոյն էր պարագան Վարուժան վարդապետին: «Հասկ»ի խմբագրումը իրեն համար դպրոց մը եղաւ):

Երկրորդ՝ Կիպրոսի Հայոց Թեմի պաշտօնաթերթ «Գեղարդ»ն է, որ 1997-էն առօրէն ամիսը (երբեմն երկու ամիսը անգամ մը) լոյս տեսնող լրագրէր է: «Գեղարդ»ը սկսած է լոյս տեսնել իր իսկ նախաձեռնութեամբ:

Ինչպէս նշեցի, բոլոր պաշտօնաթերթերն ալ հաստատութեան մը պահանջներուն ենթակայ են, ուստի անոնց բեմը յարաբերաբար որոշ սահմանափակութիւններ կ'ենթադրէ. արդ, ինքնաճանաչման յանձնառութիւնը գիրի սպասարկու այս եկեղեցականին՝ «Հասկ»ի եւ «Գեղարդ»ի հետ պաշտօնականութեան պատշաճութիւններուն ենթակայ եղած է եւ է:

Առաջին ոչ-պաշտօնական պարբերականը «Այնճար»ն է (1969): Խմբագրելու սկզբնական փորձ մըն է ասիկա, երբ տակաւին արեղայ էր: Այս պարբերականին հետ շատ յտակօրէն կը տեսնուի, թէ ինքնաճանաչման գործընթացը իր մօտ սկիզբէն յայտնուած է իբր խմբագրելու կոչումի իրագործում:

«Արծիւ»ն է այն պարբերականը, ուր անոր ինքնաճանաչման յանձնառութիւնը՝ կարելի առաւելագոյն ազատութեան մէջ եղաւ սկիզբէն մինչեւ այսօր: Ասոր առաջին թիւը լոյս պիտի տեսնէր 5 Մարտ, 1994-ին:

«Արծիւ» երկչաբաթաթերթը իբր անձնական անկախ նախաձեռնութիւն՝ հայ գիրին ծառայելու իր առաքելութեան կոչումը եւ պատգամը լայնագոյնս կը ցուցադրէ:

2.- Գրական եւ Աստուածաբանական Գործերու Խմբագրութիւն:

ա.- Յ. Օշականի ծննդեան 100-ամեակին առիթով, Պէյրութի մէջ շարք մը գիրքեր լոյս տեսան, նպատակ ունենալով մեծատաղանդ հայ գրողին իբր գիրք հրատարակուած, կամ մամուլի մէջ երեւցած եւ կամ անտիպ գրութիւնները մատենաշարի մը «տանիքին տակ» մէկտեղելու: Այս ծրագրին ղլխաւոր դէմքը արձակագիր Պօղոս Մնապեանն էր:

Արդ, «100-ամեակի Հրատարակութիւն» անունով լոյս տեսած գիրքերու շարքին մէջ՝ երկու հատոր արդիւնքն էր Վարուժան վարդապետի խմբա-

գրուլթեան. մէկը քննադատութեան կալուածի երկխօսական-մենախօսութիւն մը՝ «Հրաշքը» տիտղոսով, միւսը Հայ Հին Գրականութեան նուիրուած յօդուածներու գիրք մը՝ «Մեր Մատենագիրները» անունով:

Վարուժան վարդապետի խմբագրումի կոթողական իրագործումը՝ Յ. Օշականի «Համապատկեր»ներու շարքի վերջին ընդարձակ հատորին՝ «Վկայութիւն»ին վերծանումը եւ խմբագրումն է:

«Համապատկեր»ներու շարքը Հայ Գրականութեան պատմութեան մէջ աննախընթաց էր: Հայ գրական գիրքի արժեւորման առաջին եւ ցարդ միակ հսկայական իրագործումն էր անիկա, որ յատկացուած էր Արեւմտահայ գրականութեան: Անիկա «դատարան մը» չէր, «ոչ ալ լուսացարան մը». Օշական անով ուզած էր «մարդոց չափ, բայց աւելի լրջութեամբ մտայնութիւններն ու ասպրումները» պատկերել: 5 հատորներ լոյս տեսած էին Երուսաղէմ. 6-րդը՝ Պէյրութ, իսկ 7-րդ, 8-րդ, 9-րդ եւ 10-րդ հատորները՝ Անթիլիաս:

Եւ 10-րդ հատորին՝ «Վկայութիւն»ի վերծանումի եւ խմբագրումի ահաւոր աշխատանքով Վարուժան սրբազան մեզ բոլորս իր անձին նկատմամբ երախտապարտ կը կեցնէ:

Ասոնք որ Յ. Օշականի ձեռագիրը տեսած են, գիտեն թէ ի՞նչ կը նշանակէ զայն վերծանել: Վարուժան վարդապետ հատորի «խմբագրական նօթեր» բացատրականին մէջ հետեւեալը գրած է.-

«Յակոբ Օշականի ներկայ հատորը, ձեռագիր 762 էջ, գրուած է Երուսաղէմ, 1944 Մարտ-Յուլիս երկարող ժամանակաշրջանին:

Վատորակ թուղթի վրայ ու գունաթափ մեկանով եւ, մա՛նաւանդ՝ «պատուհաս» իր գիրով ընդամէնը չորս ամսուան ընթացքին գրուած այս գործը մեզի արժեց աւելի քան չորս անգամ չորս ամիսներու վրայ երկարած մանրակրկիտ աշխատանք մը:

Թող չափազանցութիւն չթուի, եթէ ըսենք, որ յաճախ մէկ բառին վերծանումը մեզմէ խից բազմաթիւ ժամեր եւ երբեմն օրեր՝ բառարաններու, գրականագիտական գիրքերու, եւ Օշականէն հրատարակուած կամ դեռեւս ձեռագիր մնացած գործերուն մէջ փնտռելու եւ գտնելու համար գործածուած ստոյգ բառը, յատուկ անունը, խորագիրը, մէջբերուած տողը, եւայլն»:

«Վկայութիւն»ով Յ. Օշական ի՞նչ ըրած է.-

Գլխաւորաբար՝ «ինքզինք ճանչնալու» աշխատանք մը:

բ.- Գրական գործերու խմբագրումի իր աշխատանքին մէջ, «Գառնի» մատենաշարը այլ կարեւոր իրագործում մըն է, որ Վարուժան սրբազանի ներքին ձայնէն կու գայ՝ ի տես մեր ժողովուրդի առհասարակ գիրի նկատմամբ անտարբեր կամ նոյնիսկ գիրուրաց ընթացքին, եւ մանաւանդ ի տես մեր մատողաչ սերունդը հայ գիրքէ գուրկ պահելու անփութութեան:

Յաճախ խօսուած է եւ կը խօսուի, թէ մենք մեր փոքրերուն եւ պատանիներուն համար կարդալիք գիրք չունինք: Սակայն պաշտօնէջ կերպով քիչ քայլեր առնուած են այդ լուրջ բացը լեցնելու համար: Այդ քայլերէն մէկն է «Գառնի» մատենաշարը, որուն գլխաւոր թիրախը մեր

ուսանողներն են: Թէեւ արդար պիտի ըլլայ ըսել, որ «Գառնի»ի գրքոյկները նաեւ մեծերու համար են, որովհետեւ անոնք պատանիներու համար պատշաճեցեալ գործեր չեն, այլ պարզապէս՝ Livre de Poche-ի կաղապարին մէջ գիրքին ընթեռնելի կամ մատչելի գրութիւններու հրատարակութիւններ:

Առաջին թիւը մատենաշարին՝ Մ. Գալչոյեանի «Մարութայ Սարի Ամպերը» վիպակն է, որ լոյս տեսաւ 1985-ին: Շատ հետաքրքրական է մատենաշարին մեկնակէտ այս հատորիկը: Անիկա մանիֆէստ մըն է կարծէք՝ հայ գիրքը կրթով սիրելու, որովհետեւ անոնք Մեսրոպ Մաշտոցի սրտէն են ելած, թրծուած են «արդար Արեգակով», սրբազան կոիւններու մասնակից եղած են, անոնք մեր հայրենի «գետերի ու գետակների, սարն ի վար իջվարող ու սարն ի հետ գնացող առուակների՝ շիտակ ու գուլալ ու կանաչափ առուակների հոսք» են, անոնք զինուորներ, զօրանոցներ եւ բերդեր են հայոց սահմաններուն վրայ:

«Գառնի» մատենաշարը քանի մը թիւով 40 գրքոյկի պիտի հասնի: Ամէն մէկ հրատարակութեան տպաքանակը՝ 1000²:

գ.- Աստուածաբանական գործերու խմբագրումին առնչութեամբ տեղեկացնեմ, որ Վարուժան սրբազան հիւանալի եղբայրսիրութեամբ մը եւ երախտագիտութեան զգացումով մը հաւաքեց ու երեք հատորներով ի լոյս ընծայեց Հոգելոյս Զարեհ Արք. Ազնաւորեանի սադ անդ ցրուած գրութիւնները. 2005-ին հրատարակ ելան «Լոյս Եւ Հաղորդութիւն», «Հայ Եկեղեցին 20-րդ Դարուն Եւ 21-րդ Դարու Շեմին» եւ «Աստուածաշունչը Եւ Մենք» հատորները (բոլորին ալ տպագրութեան վայր արձանագրուած է Նիկոսիան):

Զարեհ սրբազան երեք ճիգը չէր ըրած իր գրութիւնները հատորներու վերածելու, այլ միայն շատերու աշխատանքները հրատարակելու նայեր էր անձնուրաց այլասիրութեամբ մը:

Ուրախ եմ ըսելու, որ իր մահուան սեմին եւ մահէն ետք զինք սիրողներէ ոմանք պարտք համարեցին 20-րդ դարու սրբակենցաղ եւ օրինակելի եկեղեցականին գիրի վաստակը ընթերցողներուն հասցնել եւ այդպէս վկայել նաեւ մտաւորականին մասին, որ Զարեհ սրբազան եղաւ, պիտի ըսէի՝ Զարեհ Շնորհալին³:

Բ.

Խմբել եւ Գրել

«Խմբել» բառը մեր մտքին մէջ կ'արթնցնէ շարժումի մը գաղափարը. շարժումի մը՝ որ ոչ միայն տարրեր քով քովի կը բերէ, այլ նաեւ ու մանաւանդ գանոնք սկզբունքի մը, առաջադրութեան մը, նպատակի մը մէջ կը հաւաքէ: Իսկ «գրել» բառը մեր մտքին մէջ կ'արթնցնէ այլ շարժումի մը գաղափարը՝ որ անտեսանելի զգացումները, ապրումները եւ միտքերը գիրի թանձրութեան կը բերէ, գանոնք «կը թանձրացնէ», գանոնք «կ'արձանացնէ»:

Ըստ Վարուժան սրբազանի, խմբագրելով աշխատանք մը կը տարուի հոգեկան եւ իմացական միութիւն մը կերտելու:

Սրբազանին շուրջ 40 տարիներու խմբագրական վաստակը այն միութիւնը կերտելու համար եղած է:

Ի՞նչ միութեան մասին է խօսքը, անհատակա՞ն թէ հաւաքական, կամ երկուքի՞ն միասնաբար:

Անշուշտ հոգեկան եւ իմացական ամէն աշխատանք նախ եւ առաջ անհատի ներքին իրականութեան կը վերաբերի: Հետեւաբար, միութեան կերտումի 40-ամեայ վաստակը Վարուժան սրբազանի՝ իր ներաշխարհին մասին կը պատմէ Է՛ն առաջ: Հիմա ես այնտեղը մտնելու յաւակնութիւնը չունիմ, այլ պիտի ցոյց տամ համառօտ կերպով՝ միութեան կերտումի իր արտաքին նայուածքը:

Հայութեան մեծ գանգուածը, աւելի ճիշդը՝ մեծագոյնը իրեն վայր ունի Սփիւռքը: Սփիւռքը սփռումի կամ սփռումներու տեղն է: Ըստ խմբագիր եկեղեցականին, «այս օրերուն մանաւանդ, սովորական աչքերու տեսողութեամբ իսկ հաստատելի՝ անկայուն, խախուտ հէնքով իրավիճակի մը մէջ կը գտնուի» Սփիւռքը:

Մեծ Եղեռնէն ետք ցիրուցանուած հայութեան բեկորները ներքին միութեան շատ յատկանիշներ ունէին: Սակայն ատոնք կամաց կամաց «գունաթափուեցան»: «...Թշնամին ունեցաւ իր լայն բաժինը՝ մեզ տարտղնելով աշխարհի տարածքին, նուազ չեղաւ նաեւ մե՛ր բաժինը՝ սպասուածէն աւելի՛ արագ գունաթափուելով»: Սփիւռքի հայութիւնը իր «ուսերէն թօթափած» է «ինքնուրոյն պատմունեանը» եւ ինք իրմէ հեռացած է, կ'ապրի իր ոճէն տարբեր, խորթ եւ պատահական ոճերով, «անգիտանալով այն սուղ գինը, որ պատմութեան մէջ վճարեցինք մեզ ուրիշներէ զատորոշող պատմունեանին»: Ի՞նչ պատմուճանի մասին է խօսքը: Անիկա հայ լեզուն է, հայ գրականութիւնը, Հայց. եկեղեցին եւ ազգային մշակոյթը: Քանի մը նախադասութիւն առաջ գունաթափուելու մասին ակնարկեցի. անիկա կը փոխաբերէ մեր հեռացումը կամ օտարումը այն ամէն ինչէն որ հայութեան միութիւնը կը կերտէ: Հայ լեզուն, հայ գրականութիւնը, Հայց. եկեղեցին եւ ազգային մշակոյթն են միութիւն կերտողը: Եւ հայութիւնը արդէն տասնամեակներէ ասդին անոնցմէ հեռանալու ճամբուն վրայ է:

Արդ, խմբագրումի աշխատանքը, որուն նուիրուած է Վարուժան սրբազան, հաւատքի գործ մըն է, որ ուզած է եւ կ'ուզէ հեռացումը շրջել մօտեցումի: Բայց որպէսզի մօտեցումը կարելի ըլլայ նախապայման է ինքնաճանաչումը, այլ խօսքով՝ ճանչնալու կամ վերաճանչնալու այն ամէն ինչը, ուր է մեր հաւաքական ինքնութեան արմատը եւ մեր միութեան աղբիւրը: Ինքնաճանաչումով ցիրուցանուած հայութիւնը վերստին պիտի հասնի («պիտի հասուննայ») իմաստով առնել ասիկա) եւ իր վրայ պիտի առնէ «ուսեր»էն թօթափած պատմուճանը ու պիտի ըլլայ մի:

Սրբազանին համար հայութեան միութիւնը միայն սփիւռքահայու-

Թեան միութիւնը չէ, այլեւ Հայաստանի ու Արցախի: Թէ՛ «Գառնի» մատենա-
շարը եւ թէ՛ «Արծիւ»ը այդ մասին ամենաընդարձակ ձեւով կը վկայեն:
Ուրեմն, Վարուժան սրբազանի խմբագրական ճիգը մարզարէական փոխա-
բերութիւն-կոչ մըն է ի միութեան բերելու աշխարհացրիւ հայութիւնը, թէ՛
հայրենիքի մէջ եւ թէ՛ Սփիւռքի:

Ձեր վարձքը կատար, սրբազան, դուք որ գիտցաք իր ամբարները
լեցնող մեծահարուստին պէս չըլլալ, այլ ունենալ կեանքի կանոն մը, կանոն
մը խմբող եւ խմբածը արձանացնող, ու զայն փոխանցել ի պէտս մեր
ժողովուրդի ինքնաճանաչման եւ հոգեկան ու իմացական միութեան:

Վերջ գունաթափումներուն...

Գառնիկ Ք. Գ.

ԾԱՆՕԹԱԳՐԱԿԱՆ.-

1.- Վարդան Այգեկցիի եւ Մխիթար Գօշի առակներու փունջ մը կայ «Գառնի»
մատենաշարին մէջ՝ 26-րդը. Սրբազանը իր վարդապետական թեզէն մաս մը այս թիւով
տուած է:

2.- Տեղին է յիշել, որ Վարուժան սրբազան մեր փոքրիկներուն եւ
պատանիներուն հայաշունչ դաստիարակութեան համար սկիզբէն պատասխանատու
զգացած է: Այս մասին կը խօսին իր մանկապատանեկան աղուոր ոտանաւորները, որոնք
Ալեքսան Մնակեանի երաժշտական յօրինումով ամբողջ սերունդի մը ականջին մէջ
հնչեցին եւ անոր հոգին փանդակեցին, եւ կրնան դեռ երկար նոյն պաշտօնը ընել:

3.- Պարտք կը զգամ այստեղ յիշատակել անունը Օրդ. Նուէր Շիրանեանի, որ
Վարուժան սրբազանի խմբագրական կարգ մը իրագործումներուն մէջ տփնաջան «սեւ
աշխատանք» կատարողը եղաւ, եւ տակաւին կը շարունակէ ամբողջական նուիրումով:



For a Church Beyond its Walls

(Արամ Ա., Անթիլիաս, 2007, 342 էջ)

Անթիլիասի Մայրավանքի տպարանէն լոյս տեսած է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսի հեղինակած 21րդ աշխատութիւնը՝ «Իր Շրջանակը Անդրանցող Եկեղեցւոյ մը համար» վերտառութեամբ: Լաթակազմ հատորը հրատարակուած է Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան նպաստով:

Հատորին նախաբանը Նիւ Եորքին մէջ (23 հոկտ. 2005) խօսուած ճառ մըն է՝ այժմու Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Սամուէլ Քոպիլայի կողմէ, Արամ Ա. կաթողիկոսի գահակալութեան 10-րդ տարեդարձին առիթով: Ան սեղմ տողերու մէջ արժեւորած ու կարեւորութեամբ գնահատած է վեհափառին բերած թանկ նպաստը Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի գոյութեան ամրապնդումին ու զարգացումին ի խնդիր:

Արամ Ա. կաթողիկոս յառաջաբան գրութեամբ կը բացայայտէ հատորին 4 գլուխէ բաղկացած ըլլալը.

Ա. գլուխին մէջ շարք մը տեղեկագիրներ ներկայացուած են՝ ուղղուած Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնական Վարչութեան եւ ԵՀԽի Գրդ համագումարին:

Բ. գլուխը դասախօսութիւններ եւ ատենաբանութիւններ են՝ տրուած միջազգային խորհրդաժողովներու:

Գ. գլուխը կազմուած է միջ-կրօնական խօսակցութեանց ընթացքին արտասանուած ուղերձներէ:

Դ. գլուխը բաղկացած է մասնաւոր առիթներու խօսուած ճառերէ ու միջազգային դէպքերու առիթով առաքուած հաղորդագիրներէ:

Հատորին բովանդակած 25 նիւթերը նախապէս տպուած են The Ecumenical Review. International Review of Mission, L'Orient-Le Jour, Proche-Orient Chretiens եւ այլ միջ-եկեղեցական (էքիւմէնիքը) եւ աստուածաբանական հանդէսներու մէջ:

Առաքելահիմն Հայ Եկեղեցին հաւատարիմ մնալով Քրիստոսի ուսուցումներուն ու Տիեզերական երեք ժողովներու որոշումներուն, ջանացած է սիրոյ սերտ յարաբերութիւն մշակել քոյր եկեղեցիներու հետ: Հակառակ անցեալի յոյն եւ լատին եկեղեցիներու ճնշումին, հայոց եկեղեցին կառչած մնացած է իր հաւատքին ու դաւանանքին մէջ: Եկեղեցիներու Միութեան ձգտող ամէն աշխատանք ձախողութեան մատնուած է, կարգ մը եկեղեցիներու գերիշխանութեան ձգտումին հետեւանքով:

Ներկայիս, հայ եկեղեցւոյ Շնորհալի, Լամբրոնացի եւ այլ հայրապետներու ուղղութեան հետեւելով, Արամ Վեհափառ սարկաւազութեան շրջանէն սկսեալ հետաքրքրուեցաւ միջ-եկեղեցական հարցերով, մասնակից դարձաւ անոնց ժողովներուն, խորացաւ այդ նիւթերու ուսումնասիրութեանց մէջ եւ

իր հմտութեան ու ջանասիրութեան իբր հետեւանք, երկու շրջան ընտրուեցաւ ու վարեց Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Վարչութեան Գործադիր Մարմնի Ատենապետի պաշտօնը եւ ամբողջանուէր ծառայութեամբ սատար հանդիսացաւ միջ-եկեղեցական շարժումի աշխուժացման, աւետարանական, անկլիքան, յոյն, լատին եւ քոյր եկեղեցիներու համագործակցութեան, ինչպէս նաեւ իսլամ եւ այլ կրօններու երկխօսութեան զարգացումին:

ՉԱրդ դարու սեմին, եկեղեցիով ու կրօնքով հետաքրքրուած անձինք, ընթեռնելով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Աթոռակալ՝ Արամ Ա-ի «Իր շրջանակը անդրանցող եկեղեցւոյ մը համար» հատորը, լայն տեղեկութիւն պիտի քաղեն ու մօտէն ծանօթանան ներկայ շրջանի եկեղեցական ու կրօնական տաղնապններուն, դիմագրաւած մարտահրաւէրներուն ու այդ հարցերու լուծումներու առաջարկներուն:

Ըստ Արամ Ա. կաթողիոսին «սնանկացած ու ներհակ աշխարհը ահռելիօրէն կարիքը ունի իր շրջանակը անդրանցող եկեղեցիներու», որպէսզի իրագործելի դառնայ Միջ-եկեղեցական Շարժումին յաջողութիւնը Եկեղեցիներու Միութեան գործընթացքին մէջ:

Բարգէն Թօփեան

Նուիրատուութիւններ «Լոյս»ին

Տ. Վահան Քինյ. Կոստանեան	50 տոլար
Սաքենիկ Թէլեան	50 տոլար
Տ.Տ. Գալուստ Պապեան	25 տոլար
Սոնա Սեղա Հորուփեան	25 տոլար
Նորայր Պետրոս Զոլափեան	20 տոլար
Նազելի Ղազարեան	25 տոլար
Կարպիս եւ Մարի Զափարեան	50 տոլար
Հրանդ Տէտէյեան	50 տոլար
Եագուպ Ասատուրեան	100 տոլար
Լեւոն Թունեան	25 տոլար
Արմենակ Տէր Յակոբեան	100 տոլար

ՀԱՅ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ԴԱՐԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ 19Դ ԴԱՐՈՒ ՍԿԻՉՔԸ

Շատ մը պատմական վաւերաթուղթերու եւ մեր հեղինակաւոր մատենագիրներու ձգած ժառանգութիւնները կը վկայեն որ հայ ժողովուրդը լուրջ հետաքրքրութիւն ցուցաբերած է առողջութեան եւ առողջապահութեան եւ հայ բժշկութիւնը ունեցած է բարձր մակարդակ եւ զարգացում շատ հին դարերէն սկսեալ: Հազարաւոր ձեռագիրներ որոնք կը գտնուին Հայաստանի եւ Սփիւռքի զանազան կեդրոնները, ուսումնասիրուած են հայ թէ՛ օտար հեղինակներու կողմէ եւ յանգած են վերոյիշեալ հաստատումներուն:

Հեթանոս հայեր, սիրոյ եւ գեղեցկութեան դիցուհին Աստղիկը, նկատած են բժշկութեան եւ մայրութեան պաշտպան, իսկ պարկեշտութեան եւ առաքինութեան դիցուհին՝ Անահիտը, պաշտած են իբրեւ պաշտպան հիւանդներու եւ ծննդաբերող կիներու: Հեթանոսական տաճարներ կառուցուած են հայերու կողմէ, ուր գործած են քուրմերը, բուժելով հիւանդները խորհրդապաշտութեամբ: Այս տաճարներէն շատերը անուանակոչուած են Աստղիկ եւ Անահիտ դիցուհիներու յիշատակութեամբ Հայաստանի զանազան շրջաններուն մէջ, հաւատարմով անոնց ունեցած բուժումի գօրութեան: Այս երկու դիցուհիներուն պաշտամունքը արտացոլումը եղած է հեթանոս հայերու բարօր կեանք մը ապրելու եւ առողջութեան հանդէպ անոնց ունեցած մտածողութեան եւ հետաքրքրութեան:

Հայոց Վաղարշակ Թագաւորը (Ք.Ա.Բ. դար) ունեցած է առողջապահական լուրջ հետաքրքրութիւն. ան ձեռնարկած է Հայաստանի կարգ մը ճահճային վայրերը չորցնելու գործին եւ հաստատած է ծաղկատաններ այս վայրերուն մէջ:

Հայոց Թագաւոր Արտաշէս Ա. (Ք.Ա. 189-160) հիմնած է բուսաբանական պարտէզ-այգի մը, յատուկ ժողովուրդին համար: Այս այգին դարձած է զբօսնելու վայր եւ դեղաբոյսերու կեդրոն, անոր մօտ գետեղուած է Աստղիկ դիցուհին արձանը, որ հսկած է եւ պաշտպանած՝ պարտէզը եւ այցելուները:

Հայ հեթանոսական շրջանին, տաճարներուն կից գոյութիւն ունեցած են պատսպարաններ, ուր պահած են եւ դարմանուած են բորոտները: Մշոյ տարածքին մէջ գտնուած է «Ուրուկնոց» անուն քաղաք մը, ուր բորոտները մեկուսացուած են:

Հին դարերուն, հայկական լեռնաշխարհի դեղաբոյսերը նշանաւոր դարձած են եւ մեծ համբաւի տիրացած են թէ՛ Արեւելքի եւ թէ՛ Արեւմուտքի մէջ: Հանքային դեղամիջոցները ունեցած են մեծ հռչակ, հայկական կաւը, բորակը, ինչպէս նաեւ սնդիկի, երկաթի, զինքի եւ արճիճի խառնուրդները օգտագործուած են զանազան հիւանդութիւններու պարագային: Կենդանական դեղամիջոցները դարձեալ յատկանշական եղած են կենդանիներու կարգ մը ներքին գործարանները, ինչպէս ուղեղ, լեարդ, փայծաղ, օգտագործուած են հայկական նախնական բժշկութեան մէջ:

Քրիստոնեայ Հայաստանի առաջին հիւանդանոց-բորոտանոցը (ուրուկանոց) հիմնուած է Աղվիտա իշխանուհիին կողմէ 260 թուականին (Ք.Ե.), Եւրոպական բորոտանոցներու հիմնադրութենէն 2 դար առաջ: Աղվիտա կամ Աղուիթա եւ կամ Աղապիտի որ կը նշանակէր Սիրանոյշ: Ան կինն էր Սուրէնի որ կ'ապրէր Սալահունեաց գաւառի Սուրէնաշէն ավանին մէջ: Աղվիտա նշանաւոր էր իր ֆիզիքական գեղեցկութեամբ, իր երկիրազօնութեամբ եւ աղքատներու հանդէպ իր ողորմասէր զգացումներով: Ան ունէր տղայ գաւակ մը որ կը կոչուէր Աթենադորոս, ան հիւանդ էր եւ հեռու կը մնար շրջապատէն: Աղուիթա դարձեալ հեռու մնաց աշխարհէն իր տղուն անհանգստութեան պատճառով եւ ապրեցաւ բնութեան մէջ: Ան շինել տուաւ ազարակ մը թգենիններով եւ կոչեց զայն «թգազարակ» որուն մէջ հաստատեց նաեւ անկելանոց մը պատսպարելու համար ցաւազարներ: Իր գաւակը Աթենադորոս հոն պատսպարուող հիւանդներէն մէկն էր: Թգազարակին մէջ կ'ապրէր քրիստոնէութիւնը ընդունող Դասիկ քահանան: Աթենադորոս կը հետեւի Դասիկի քրիստոնէական քարոզներուն եւ կը դառնայ հաւատացեալ քրիստոնեայ: Այդ օրերուն քրիստոնէութիւնը ընդունող «Գրիգոր» կալանաւորուած կը տարուէր Խոր Վիրապ, ճամբու ընթացքին կը հանդիպի Թգազարակի հիւանդներուն եւ հոն կը յանձնարարէ Դասիկ քահանային մկրտել Աթենադորոսը, քահանան կը կատարէ Գրիգորի առաջարկը, կը մկրտէ եւ կոչէ զայն Թէոդորոս որ կը նշանակէ Աստուածատուր: Սակայն Սուրէն զայրացած իր գաւակին ընթացքէն իր սուրով կը գլխատէ Թէոդորոսը որ կը նահատակուի 296ի Մայիս 1ին: Գրիգոր այս թուականէն 5 տարիներ ետք ազատ կ'արձակուի Խոր Վիրապէն, կը ձեռնադրուի եպիսկոպոս, ան կ'երթայ Թէոդորոսի գերեզմանին մօտ, կ'աղօթէ եւ հոն կը կանգնեցնէ մատուռ մը ու կը կարգէ քահանայ Դասիկը մատուռին սպասաւորը: Հետագային այս մատուռին տեղ կը բարձրանայ տաճար մը ուր կը թաղուին Աղուիթան եւ Դասիկ քահանան:

Մեծն Ներսէս Հայրապետ (353-373) ցուցաբերած է լուրջ հետաքրքրութիւն հանդէպ առողջութեան եւ բժշկութեան: Մեծն Ներսէս իր կղերի եւ ազնուականութեան գործակցութեամբ եւ օժանդակութեամբ հիմնած է պատսպարաններ, բորոտանոցներ եւ հիւանդանոցներ Հայաստանի գանազան քաղաքներուն մէջ, այս առողջապահական եւ բժշկական կեդրոնները գործած են դարեր շարունակ: Ան գործադրած է հանրային առողջապահական շարք մը միջոցառումներ եւ օրէնքներ, օրինակի համար ազգականական ամուսնութիւնները արգիլած է, պոռնկութիւնը, ապօրինի սեռային յարաբերութիւնը եւ վիժումը բուռն կերպով հալածանքի ենթարկած է, կարգ մը հիւանդութիւններու գոյութեան պարագային արգիլած է ամուսնութիւնը:

Դ. դարուն, Սլազի մէջ հիմնուած է հիւանդանոց մը անդամալոյծներու, ծերերու եւ որբերու համար:

Ե. դարուն, Սիւնիքի մէջ, Արաքսի եզերքը հիմնուած է 500 բորոտներ պարբախող բորոտանոց մը:

Գիւտ կաթողիկոս (461-478) կրօնաւոր ըլլալով հանդերձ, ուսանած է

նաև բժշկութեան արուեստը եւ օգտագործած է կարգ մը դեղեր իր աղօթքնե-
րու կողքին:

Հայ դասական բժշկագիտութեան եւ բժշկութեան նախապատրաստու-
թիւնը սկսած է Ե. դարուն Հայ գիրերու գիւտով եւ ստեղծումով Մեսրոպ
Մաշտոցի ձեռամբ: Հայ բժշկական գրականութեան հիմը դրուած է, սեփական
Հայ գիրերով շուտով թարգմանական աշխատանքներ սկսած են, Հայ բժշկա-
գիտութիւնը եւ բժշկութիւնը ծագկում արձանագրած է Հայ ինքնուրոյն գրա-
կանութեան կողքին Ե. դարէն ետք:

5-7րդ դարերուն Հայաստան որոշապէս ազդուած է յունական մշակոյ-
թէն, գրականութենէն, փիլիսոփայութենէն եւ բժշկագիտութենէն: Հայ
բժշկութիւնը հետեւած է յոյն բժշկութեան սկզբունքներուն եւ Հայ բժիշկներ
հայերէնի թարգմանած են շատ մը յունական բժշկական գործեր: Արաբական
ծաւալումով եւ արաբական բժշկագիտութեան տիրապետումով, 7րդ դարէն
ետք, Հայ բժշկագիտութիւնը այս անգամ եւս հետեւած է արաբ մեծ հեղինակ-
ներու գործերուն, գիտութեան եւ բժշկութեան:

Դաւիթ Անյաղթ փիլիսոփան (Ե.-Ձ. դարեր) քաջածանօթ եղած է յունա-
կան բժշկութեան: Անանիա Շիրակացին մեծ հետաքրքրութիւն ցուցաբերած է
բժշկութեան հանդէպ, ան իր «Քրոնիկոն» աշխատասիրութեան մէջ երկարօ-
րէն խօսած է բժշկական հարցերու մասին: Ան դարմանած է Պարսկաստանի
թագուհին ամլութենէ:

Ը. դարուն, յայտնի եւ տաղանդաւոր երաժշտուհի Սահակգուլիստ
հիւանդները դարմանած է երաժշտութեամբ, այս միջոցառումը ժողովրդային
բժշկութեան կողմէ գործածութեան մէջ պահուած է մինչեւ 19րդ դար Հայաս-
տանի զանազան շրջաններուն մէջ: Այս ժամանակաշրջանին, խելագարները
դարմանուած են մեկուսի վայրերու մէջ, ի մասնաւորի՝ վանքերու: Սեւանայ
վանքը շրջան մը ծառայած է այս նպատակին:

Բագրատունիները տենդագին աշխատանք տարած են առողջապահա-
կան եւ բժշկական մարզերու մէջ: Անոնք Անի քաղաքը վերածած են մշակոյ-
թի մեծ կեդրոնի, հոն կառուցած են մեծ թիւով հիւանդանոցներ, դարմանա-
տուններ, բաղնիքներ եւ ջրուղիներ, ինչպէս նաև օգտագործած են հանքային
աղբիւրները, ամենուրեք: Հաղբատի, Սանահինի եւ Անիի մէջ, Բագրատունի-
ները հիմնած են բարձրագոյն կրթական օճախներ, ուր դասաւանդուած են
նաև բժշկագիտութիւն, այլ գիտութիւններու կողքին:

Ձաքարիա Ձագեցի կաթողիկոսի օրով (855-876) Յովհաննէս բժիշկ կա-
տարած է մեծ թիւով բժշկական թարգմանութիւններ:

Ուրիշ Հայ բժիշկ մը դարձեալ Յովհաննէս անունով, 880ին, թարգմանած
է շատ մը երկեր Վեսիական լեզուէ (վրացերէն) հայերէնի:

Աշոտ Գ. Ողորմած եւ իր տիկինը թագուհի Խոսրովանոյշ, հիմնած են
հիւանդանոցներ (953-977), ուր գործած են Հայ բժիշկներ: Խոսրովանոյշ հիմ-
նած է նաև երկու վանքեր, որոնցմէ Սանահինի վանքը դարձած է բժշկու-
թեան կեդրոն:

Հայկական առաջին «բժշկարանը» գրուած է Բագրատունի Գագիկ Ա. թագաւորի օրով (990-1020), այս բժշկարանին հեղինակը անյայտ եղած է: Յետագային, Կիլիկեան շրջանին, այս բժշկարանը վերախմբագրուած է եւ կոչուած է «Գագիկ-Հեթումեան բժշկարան»:

11րդ դարուն, Գրիգոր Մագիստրոս եղած է հմուտ գիտնական եւ մատենագիր, ան սերած է Պահլաւունի ազնուական ընտանիքէն եւ իր ուսումը ստացած է Բիւզանդիոնի մէջ: Գրիգոր Մագիստրոս հիմնած է ակադեմիաներ (1020-1040), ուր դասաւանդած է զանազան գիտութիւններ: Սանահինի ակադեմիան եղած է իր հիմնած մշակոյթի կեդրոններէն մէկը: Ան թարգմանած է բազմաթիւ երկեր, ունեցած է մեծ թիւով թղթակցութիւններ, որոնք հարուստ եղած են բժշկական նիւթերով եւ գաղափարներով: Ուշագրաւ եղած է իր ուսումնասիրութիւնը՝ «Մարտողական դրութեան գործելակերպը» գործը:

Շուշիկ Պահլաւունի, Մագիստրոսի Հանին, Սանահինի վանքին մէջ կը հիմնէ նոր դարմանատուն եւ բժշկական դասընթացք այլ գիտութիւններու կողքին:

Հայ դասական բժշկութեան հիմնադիրը նկատուած է Մխիթար Հերացին: Ան ծնած է Հեր, Պարսկաստան, պատկանած է արաբական դպրոցին, ուսումնասիրած է բժշկութիւն, աստղաբաշխութիւն եւ փիլիսոփայութիւն: Մխիթար Հերացի ապրած եւ աշխատած է Սիս մայրաքաղաքի մէջ: Գրած է բազմաթիւ բժշկական երկեր, որոնցմէ կարեւորագոյնները նկատուած են հետեւեալները.

1. «Ջերմանց մխիթարութիւն», կամ՝ «Ջերմանց բժշկութիւն»:

Մխիթար այս երկը գրած է 1184ին, օգտագործելով արաբական եւ պարսկական աղբիւրները: Այս գիրքը տպուած է Վենետիկի մէջ 1832ին եւ թարգմանուած է գերմաներէնի Լայբցիկի մէջ 1908ին: «Ջերմանց մխիթարութիւն»ը կազմուած է 46 լուխներէ եւ դեղագիրներու հաւաքածոյէ մը, ան հիւանդութիւններու ախտաբանական ուսումնասիրութիւն մը եղած է, ուր Մխիթար նկարագրած է նաեւ իր անձնական փորձառութիւնը, գրած է իր անձնական տեսակէտները եւ համոզումները, ինչպէս նաեւ քննադատած է իր նախնիքները, նոյնիսկ համաշխարհային բժշկական դէմքեր:

2. «Վասն քարանց եւ յատկութեանց նոցա եւ բժշկութիւն նոցա»:

3. «Աչքի անաթոմիա»:

4. Ախտաբանական եւ դեղաբանական գիրք մը:

5. «Ճշմարիտ ցուցմունք, հաւատարիմ եւ վստահ, որոտումի եւ երկրաշարժի», բնագիտական ուսումնասիրութիւն մը:

Մխիթար Հերացի հիւանդութիւններու ծնունդը կապած է հիւանդներու արհեստներուն հետ եւ ջերմութիւնները դասաւորած է երեք դասակարգի՝

1. Կարճատեւ-միօրեայ ջերմութիւններ, որոնք նոյնիսկ կապ կրնան ունեցած ըլլալ մարդոց տրամադրութիւններէն եւ հոգեբանական վիճակէն:

2. Հիւծիչ եւ բորբոսային:

3. Փոտիչ եւ հալեմաչ:

Ան հաւատացած է բուժումի երեք ձեւերու կամ միջոցառումներու՝

1. Ֆիզիքական բուժում, ինչպէս մարձում, մարզանք եւ լողանք:

2. Բուսական, դեղաբոյսերու գործածութիւն, ինչպէս նուսուֆար, մանուշակ, վարդ, շուշան, եւայլն:

3. Մնդագիտական, կանաչեղէններու, բանջարեղէններու, թարմ ձուկի, հաւու միսի, հաւկիթի դեղնուցի եւ կաթի գործածութիւն:

Մխիթար Հերացի ջատագովը եղած է սննդառութեան, օրինաչափութեան, ջրաբուժութեան եւ թեւադրական բուժումի: Ան զբաղած է նաեւ ակնաբուժութեամբ եւ ունեցած է հայերէն բժշկական մեծ բառամթերք: Ան կոչուած է «Մխիթար Իմաստուն» կամ «Մեծ բժիշկ»:

Իշխան Թորոս (1100–1129) հաստատած է հիւանդներու եւ պանդուխտներու համար պատուարաններ:

Լեւոն Բ. շինած է բորոտանոց մը Հաճընի մօտ, ինչպէս նաեւ հաստատած է աղքատներու սպասարկութիւններ եւ պատուարաններ:

Ձապէլ թագուհին, Լեւոն Բ-ի դուստրը 1241ին հիմնած է Միսի նշանաւոր հիւանդանոցը, ուր գործած են նշանաւոր հայ բժիշկներ, այս հիւանդանոցը գործած է մինչեւ 1375 եւ կործանած է 1624ին, երկրաշարժի պատճառով:

Լեւոն Գ., Լեւոն Բ-ի թոռը, շարունակած է իր մեծ հօր մարդասիրական եւ առողջապահական գործը:

Հիւանդապահութիւններու հասկացողութիւնը եւ ծառայելու բմբռնումը տարածուած է 1149ին, Խաչակիրներու միջոցաւ: Խաչակիրները աշխատած են հիւանդանոցներու մէջ եւ մեծ հոգատարութիւն ցուցաբերած են հիւանդներուն, Կիլիկեան շրջանին մէջ գործող հիւանդանոցներէ ներս: Անոնք օրինակ դարձած են շատ հայերու, որոնք որդեգրած են այս տեսակի աշխատանքներ:

Կիլիկեան իշխանութեան շրջանին, հայ բժիշկները ունեցած են նախանձելի ընկերային դիրք, անոնք վայլած են մեծ յարգանք թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ իշխանութեան կողմէ: Բայց եւ այնպէս, անոնք ունեցած են նաեւ մեծ պատասխանատուութիւններ, հանդէպ ժողովուրդին եւ պետականութեան: Հայ բժիշկները Կիլիկիոյ մէջ գործած են նաեւ որպէս օրէնսգէտ բժիշկներ եւ ծառայած են դատարաններու մէջ: Անոնք տուած են բժշկական, առողջապահական եւ դատական հաստատագիրներ, վկայագիրներ եւ վճիռներ, ի մասնաւորի լուսնոտութեան, ամլութեան եւ ամուսնալուծման: Ընդհանուր բժշկական բարոյագիտութիւնը հիմք ծառայած է բժիշկներուն ամենօրեայ աշխատանքին եւ անոնց բժշկական ծառայութեան, դիտաւորեալ ոճիը նկատուած է բժշկին մերժումը՝ հիւանդը տեսնել իր բնակարանին մէջ: Բժիշկին արհեստագիտական անկարողութիւնը եւ կամ թերացումը նկատուած է կանխամտածուած ոճիը: Յաճախ բժիշկը ամբաստանուած է իր թերութեան համար եւ ծանր պատիժներու ենթարկուած է:

Գրիգոր Տաթեւացի (1340–1411) եղած է կրօնական անձնաւորութիւն եւ հե-

ղինակ: Ան բժիշկ չէ եղած բայց հետեւած է բժշկութեան գիտելիքներուն եւ գիտութեան: Ան մտահոգ եղած է իր ժողովուրդի առողջութեամբ եւ ըրած է բժշկական բազմաթիւ լուրջ թելադրութիւններ: Տաթեւացի գրած է բազմաթիւ ուսումնասիրութիւններ, որոնք կազմած են ամբողջութիւն մը՝ «Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօր մերոյ Գրիգոր Տաթեւացւոյն» անունով եւ որ հրատարակուած է Պոլիս, 1729ին: Այս երկը համադրում մը եղած է հետեւեալ նիւթերու.

1. «Մարդու կեանքը»:
2. «Մարդկային անաթոմիա»:
3. «Վասն քնոյ»:
4. «Դիմագիտութիւն»:

Գրիգոր Տաթեւացի հաւատացած է ժառանգականութեան կարեւորութեան, ան շեշտած է որ ժառանգականութիւնը կ'որոշէ մարդու նկարագիրը, մինչեւ իսկ անոր արտաքին դիմագիծը, ինչպէս նաեւ մտային զարգացումը կախեալ է տեսողութենէն եւ լսողութենէն: Տաթեւացիին համար այս երկու զգայարանքները ազնուական զգայարանքներ նկատուած են: Ան յօրինած է բժշկական բառագիրք մը (1279-1304) եւ ունեցած է վիրաբուժական ձեռագիրներ եւ բժշկական բազմաթիւ թարգմանական գործեր:

Ամիրտովլաթ Ամասիացի բժշկապետը ծնած է Ամասիա 1420-1425ի միջեւ եւ մահացած է 1496ին, Պրուսա: Ան արժանաւոր յաջորդը եղած է Գրիգոր Մագիստրոսի եւ Մխիթար Հերացիի: Ամիրտովլաթ ուսումը ստացած է Միջագետքի եւ Արաբիոյ մէջ եւ հետեւած է իր ժամանակակից բժշկութեան վարդապետութիւններուն:

Ան ձգտած է միշտ կատարելագործումի եւ հաւատացած է որ իւրաքանչիւր բժիշկ յարատեւ կարողալու է եւ հետազօտելու է իր ամբողջ կեանքի ընթացքին: Եղած է պահանջկոտ՝ բժշկական բարոյագիտութեան նկատմամբ եւ ուզած է տեսնել միշտ իտէալ բժիշկը: Մեծապէս ազդուած է արաբական դպրոցէն, ճամբորդած է շարունակ եւ դարմանած է բոլորը անխտիր: Իր վերջին տարիները ապրած է Պոլիս եւ դարձած է Մուհամմէտ Բ-ի պալատական գլխաւոր վիրաբոյժ: Զբաղած է նաեւ աստղաբաշխութեամբ:

Ամիրտովլաթ գրած է հետեւեալ երկերը՝

1. «Ուսումն բժշկութեան»՝ 1459, հաւաքածոյ՝ մարդակազմութեան, առողջապահութեան, ախտաբանութեան, դեղագիտութեան:
2. «Բժիշկ Կադիանոսի բարք այբուբենական ի վերացւոցն»՝ բառարան, յունարէնէ-հայերէնի:
3. «Օգուտ բժշկութեան»՝ 1469, հաւաքածոյ՝ մարդակազմութեան, բնախօսութեան, առողջապահութեան: Վերամշակումն է «Բժշկութեան ուսմունքին»:

Ամիրտովլաթ խօսած է այս երկին մէջ 209 տարբեր հիւանդութիւններու մասին եւ մանրամասնօրէն անդրադարձած է հոգեբանական, կանացի, ականային, քիթային, ականջային եւ կոկորդային հիւանդութիւններուն: Ան նկարագրած է մարմնի բոլոր օրկաններու ձեւը, կառուցուածքը, դերը եւ գործե-

լակերպը, կարեւորութեամբ անդրադարձած է աչքի թաղանթներու կառուց-
ուածքին եւ դերին, ինչպէս նաեւ տեսողական գործելակերպին:

4. «Գիրք ռամկական արուեստի»՝ արաբերէնէ հայերէնի թարգմանած է 1474ին, գործնական գանազան պատճառներու շտեմարան մը եղած է:

5. «Ախրապատին»՝ 1459, Պոլիս, դեղաբանութեան գիրք մը, որ ամբող-
ջացուած է Հայերէն, յունարէն, ֆրանսերէն, արաբերէն եւ պարսկերէն բառա-
րանով մը:

6. «Բժշկարան»՝ բժշկական ընդարձակ գիրք մը, իր նախնիքներէն եկած
չատ մը սխալ ըմբռնումներու սրբազրութիւններով հարստացած:

7. «Վասն նշանաց հիւանդին, զկենաց եւ զմահուն»՝ մարմնակազմու-
թեան գիրք մը:

8. «Բառարան դեղագործութեան»՝ այբբենական կարգով գրուած, հայե-
րէն, յունարէն, ֆրանսերէն, արաբերէն եւ պարսկերէն լեզուներով:

9. «Անգիտաց անպէտ»՝ 1478-1482, Պոլիս. բաղկացած է 624 էջերէ,
տպագրուած՝ Վիեննայի Մխիթարեաններու մօտ, 1921ին: Գիրքը եղած է
Ամիրտովլաթի ամէնէն կարեւոր աշխատասիրութիւնը, որպէս դեղերու բա-
ռագիրք, 3754 դեղագիրներով, իր ճոխութեամբ եւ կարեւորութեամբ առաջին
կարգի հեղինակութիւն մը դասուած է եւ նկատուած է հայ բժշկական ձեռագ-
րիներու մէջ ժամանակագրականօրէն երրորդ բժշկարանը, առաջինը եղած է
Գազիկ թագաւորի օրով գրուած բժշկարանը, երկրորդը՝ Մխիթար Հերացիի
«Զերմանց մխիթարութիւն»:

Ամիրտովլաթ իր դարմանումներուն մէջ մեծապէս օգտագործած է բոյ-
սերը, հանքային նիւթերը եւ ջուրերը, ինչպէս նաեւ կենդանական ներքին օր-
կանները եւ գեղձերը: Ան հաւատացած է հիւթաբուժութեան եւ օրկանաբու-
ժութեան իր դարմանական միջոցառումներուն մէջ, օգտագործած է նաեւ
արեւաբուժութիւնը: Գործածած է նուրի կեղեւը, դոլմի կուտը եւ նաֆթը՝
որպէս որդի դեղ:

Բժիշկ Յովան, 15րդ դարուն, պատրաստած է դեղային պատրաստու-
թիւններու մեծածաւալ բառարան մը, բժշկական տարբեր ճիւղերու հակիրճ
ամփոփումներով:

1462ին, բժիշկ Վաչէ գրած է բժշկարան մը:

Յովհաննէս Արքեպիսկոպոս, 16րդ դարուն ընդօրինակած է հայ հեղի-
նակի մը հին գործը, որ կոչուած է «Գաղտնիք կանանց»: Այս երկը ամբող-
ջութեամբ ծննդագիտութեան համապարփակ գործ մը եղած է եւ պարունա-
կած է հետեւեալ գլուխները:

Յղութիւն, սաղմաբանութիւն, մոլորակներու ազդեցութիւն եւ հոգի,
հրէչածիններու, յղութեան նշաններ, սեռը սաղմի մէջ, կուսաթաղանթ, յղու-
թիւնը արգիլելու կերպեր:

Յովհաննէս Արքեպիսկոպոսի օրերուն, հայ ժողովուրդին մէջ գործած են
կղերական դայեակներ:

Հայերէն առաջին գիրքը՝ «Ուրբաթագիրք», տպուած է 1512ին, Վիենտիկ,

Կիւթեմպէրկի գիւտէն 60 տարի ետք, իսկ առաջին բժշկական գիրքը որ հայերէն լեզուով տպուած է, եղած է Գաղիանոսի մէկ աշխատասիրութիւնը 1513ին:

Պուենիաթ Սեբաստացի ծնած է 16րդ դարու վերջերը, իր նշանաւոր երկասիրութիւնը եղած է «Գիրք բժշկական Տոմարի» որ գրուած է Սամսոնի մէջ 1630ին: Պուենիաթ ունեցած է բժշկագիտական ճոխ գրադարան մը, որ հրկիզուած է 1625ին:

Ասար Սեբաստացի ապրած է 16-17 դարերուն եւ վայելած է մեծ համբաւ, որպէս բժիշկ եւ մանաւանդ իր նշանաւոր բժշկական գիրքին հեղինակութեամբ: Գիրքը կոչուած է «Յաղագս բժշկական արհեստի» բժշկարան եւ գրուած է 1614-1622: Այս գիրքը նկատուած է համառօտագրութիւն մը եւ կամ նիւթերու ամփոփում մը բժշկական զանազան նիւթերու գործերուն: Գիրքը ունեցած է 140 գլուխներ, որոնցմէ կարեւորագոյններն են՝

1. «Յաղագս կազմութեան մարդոյն եւ գոյակցութեան ամենայն անդամոց մարմնոյն»: Ասար օգտագործած է Ապու Սայիտի եւ Մեծն Մխիթարի գործերը:

2. «Վասն կազմութեան մարդոյն, մեծին Գրիգորի հիւսացոյն, համառօտեալ բաղտատարան»:

3. «Դուռն որ ցուցանէ զպատճառներն որ են սաբաբաթներն հիւանդութեանց»:

4. «Գիրք բժշկական արհեստի». այս բաժինը ամբողջովին Ասարի հեղինակութիւնը եղած է եւ կազմուած է 135 ստորաբաժանումներէ:

5. «Վասն ամենայն ցաւոց բժշկական դեղոց»:

6. «Բառ ի վերայ բժշկական վարդապետութեան վասն դեղերու»:

7. «Բառ եւ պատմութիւն մեկնած ամենայն ցաւոց»:

8. «Այլ ցեղ ցաւք»:

9. «Բառ Գաղիանոսի բժշկապետի եւ ճարտարի»:

10. «Բառ բժշկական վարդապետաց. դեղաբանական բառերու ցանկ»:

11. «Բառ հայերէն, արապկերէն, լատիներէն»:

12. «Վասն կշռոց եւ լիտրերու եւ դրամներու եւ գիլոտն եւ զնուկին, եւ զմթիալն», չափերու եւ կշիռներու ցանկ:

13. Այս բաժինը պարունակած է անկապ խառն ի խուռն նիւթերու հաւաքածոյ մը:

14. Դեղաբանական զանազան նիւթերու բաժին մը:

15. Դարմանաբանութեան եւ դեղաբանութեան բաժին մը:

16. Առողջաբանութեան եւ դեղաբանութեան բաժին մը:

Ասար մեծապէս ազդուած է արաբական դպրոցէն, ան յաճախ գործածած է արաբերէն բառեր, ինչպէս վերը յիշուած է. «սաբաբաթներ», որ հայերէն «պատճառներ» կը նշանակէ, եւ կամ արաբերէնի թարգմանած է հայերէնը, ինչպէս վերը յայտնի է՝ «դուռ» արաբերէնի «պապ» բառի թարգմանութիւնն է եւ գործածուած է «գլուխ» բառի փոխարէն:

Ասար Սեբաստացի ունեցած է այլ ձեռագիրներ, որոնցմէ մէկը գրած է

1625ին քաղուածաբար սուրբիացի բժիշկ Ասուտ Սախտի «Մարդակազմութեան» գործէն, ունեցած է նաեւ ուրիշ ձեռագիր մը, որ գրած է Սուրաթի (Հնդկաստան) մէջ 1657-58ին ախտաբանութեան եւ դեղագիտութեան նիւթերու մասին, ան վերջաւորութեան գրած է բժշկագիտութեան բառերու արաբերէն եւ յունարէն նշանակութիւններու ցանկ մը:

Բժիշկ Գալուստ Ամասիացի, սկսած է աշխատել որպէս բժիշկ 1669ին: Ան գրած է բժշկարան մը, կազմուած 600 էջերէ եւ 150 գլուխներէ, հետեւեալ նիւթերու շուրջ՝ կազմախօսութիւն, ախտաբանութիւն, առողջապահութիւն եւ դեղագիտութիւն:

Յակոբ քահանայ, որ ապրած է 17րդ դարուն, եղած է նաեւ բժիշկ, ան ընդօրինակած է 1682ին բժշկական գիրք մը, որ պարունակած է 2000է աւելի բժշկական նիւթեր եւ հարիւրաւոր հիւանդութիւններու անուններ:

Պայլեւի Գէորգ եղած է Ջուղա բնակող հայորդիի մը զաւակը: Ան ծնած է 1668ին եւ մահացած է 1707ին, երիտասարդ տարիքին: Պայլեւի ուսանած է Իտալիա, Բայերնի մէջ, ետքը Փատովա եւ Բոլոնյա, հաստատուած է Հռովմ եւ գործած է որպէս բժիշկ Սապիենզա համալսարանին մէջ: Ան, 28 տարեկանին կը նշանակուի մարդակազմութեան եւ վիրաբուժութեան փրոֆեսէօր, Պապին կողմէ, Պայլեւի կոչուած է «բժշկութեան բարեկարգիչ» եւ «նոր Հիպպոկրատ»: Ան հեղինակած է շատ մը ուսումնասիրութիւններ, որոնք նշանաւոր եղած են ինքնատիպ գաղափարներով եւ նորանոր հասկացողութեամբ բժշկագիտութեան մէջ: Իր համբաւը եղած է մեծ եւ վայելած է յարգանք իր շրջապատին մէջ:

Սահակ Պոնտացի եւ ի որդին Մանուկ, 18րդ դարուն կը դառնան յայտնի եւ յարգուած բժիշկներ:

Բուժակ Հայր Պօղոս Պետրոսեան ծնած է Ակն եւ ապրած է 19րդ դարուն, մեծ մասը Պոլիս. կղերական ըլլալով հանդերձ, զբաղած է նաեւ բժշկութեամբ, շնորհիւ իր ունեցած բժշկագիտական պաշարին: Կրօնական առաքելութեամբ ճամբորդած է շատ մը վայրեր, այցելած է արաբական երկիրներ եւ ականատես եղած է Հալէպի ժանտախտի համաճարակին, 1835-36ին: Հայր Պօղոս գրած է ժանտախտի դարմանաբանութիւն մը 1837ին եւ ունեցած է կարգ մը բժշկական վաւերական յօդուածներ հայ մամուլին մէջ:

18րդ եւ 19րդ դարերը եղած են նշանակալից եւ անկիւնադարձային դարեր, համաշխարհային բժշկութեան համար: Միջնադարեան բժշկութիւնը, որ հիմք ունեցած է յունական եւ արաբական բժշկութիւնը, կը սկսի անկումի նշաններ ցուցաբերել 18րդ եւ 19րդ դարերուն, ասոր փոխարէն ի յայտ կուգայ եւ կը ծաղկի եւրոպական-արեւմտեան նորատիպ բժշկութիւնը, հիմնուած գիտական եւ փորձառական նոր տուեալներու վրայ: Հայ բժիշկներն ալ ապրած են եւ գործած, այս գիտական-բժշկական յարափոփոխ պայմաններուն մէջ: Կարգ մը հայ բժիշկներ հետեւած են Գրիգոր Մազիսարոսի, Մխիթար Հերացիի եւ Ամիրտովաթի ու հին յունական եւ արաբական բժշկագիտութեան սկզբունքներուն, իսկ ուրիշներ հետեւած են եւ ուսանած՝ եւրոպական բժշկա-

կան նոր կեդրոններու մէջ եւ ստացած են նոր տուեալներով բժշկական եւ գիտական այժմէական կրթութիւն, ուսում եւ փորձառութիւն: 19րդ դարու սկիզբը, արդէն գտնուած են հայ բժիշկներ, որոնք աւարտելէ ետք իրենց բժշկագիտութեան դասընթացքը, վերադարձած են իրենց ծննդավայրերը եւ գործած են ու ծառայած՝ նոր շունչով:

Այս ժամանակաշրջանին կարգ մը հայ գաղութներու մէջ շատ մը հայ բժիշկներ հետեւած են այս նոր բժշկական արդի դաստիարակութեան: Անոնք մեկնած են Եւրոպայի նշանաւոր բժշկագիտական կեդրոնները, ի մասնաւորի Իտալիոյ, Ֆրանսայի եւ Անգլիոյ համալսարանները: Աւարտելէ ետք իրենց ուսման շրջանը, մեծամասնութիւնը վերադարձած են իրենց ծննդավայրերը եւ ծառայած են իրենց գաղութներու հայ կամ ոչ-հայ ժողովուրդներուն: Պոլիս եղած էր հայ մշակոյթի լաւագոյն կեդրոններէն մին, հոն զարգացած է նաեւ հայ բժշկական միտքը: Մեծ եղած է հայ բժիշկներու թիւը, որոնք վերադառնալէ ետք Եւրոպայի բժշկական կեդրոններէն, գործած են Պոլսոյ մէջ եւ կամ Թրքահայաստանի զանազան շրջաններուն մէջ: Անոնցմէ շատեր եղած են ակադեմիկներ եւ գրաւած են առաջնորդի դիրքեր եւ ստանձնած են պատասխանատու պաշտօններ: Այս բժիշկներէն եղած են հետեւեալները.

— Պօղոս Անտոնեան (Շաշիեան) վկայուած է Հոռմէն 1769ին, Սուլթան Համիտ Ա.ի կողմէ նշանակուած է արքունի բժշկապետ եւ մնացած է այս պաշտօնին վրայ երեք սուլթաններու օրերուն: Ան մահացած է 1815ին, Պոլիս:

— Ստեփանոս Շէհրիմանեան. ուսանած է Իտալիա եւ ծառայած է Պոլսոյ մէջ, ան անուանի դարձած է իր ժանտախտի դէմ դարմաններուն համար: 1791-1796 դարձած է հանրածանօթ, Պոլսոյ մէջ: Բժ. Շէհրիմանեան գրած է «Անդեղեայ ժանտախտ» եւ «Հայաստանի Փլորայ» գիրքերը:

— Գրիգոր Անտոնեան. վկայուած է Փատովայի բժշկական համալսարանէն 1793ին: Վերադարձած է Պոլիս եւ կարգուած է պալատական բժիշկ կայսերական գերդաստանին: Մահացած է 1865ին, Պոլիս:

— Մանուէլ Շաշիեան, վկայուած է Փատովայի համալսարանէն 1801ին, վերադարձած է Պոլիս եւ դարձած է արքունի բժշկապետ, եղած է հիմնադիրը Ս. Յակոբ անկեկանոց-հիւանդանոցին, Պոլիս: Բժ. Շաշիեան Օսմանեան կայսրութեան մատուցած է եզակի, կարեւոր եւ անմոռանալի ծառայութիւն առողջապահական տեսանկիւնէն: 1831-1832ի քոլերայի համաճարակին նախաինամական դեր կատարած է Պոլսոյ մէջ: Ան արժանացած է Սուլթանի «Իֆթիխար» ակադեմիկ պատուանշանին: Մահացած է 1858ին եւ թաղուած է Ս. Յակոբ հիւանդանոցի պարտէզը:

— Բէստէն Տէր Պետրոսեան. վկայուած է 1799ին Բիզայի բժշկական համալսարանէն: Ան հաստատուած է Եգիպտոս եւ դարձած է ինամատար բժիշկը Եգիպտոսի Մեհմէտ Ալի փոխարքային, որու հետ մտերմացած է եւ վայելած է անոր վստահութիւնը: Բժ. Տէր Պետրոսեան 1818ին պատրաստած է բժշկական երկու երկասիրութիւն՝ «Բժշկականութիւն» եւ «Բժշկական բազմաբարձր», որոնք լոյս տեսած են 1822ին Վենետիկի Ս. Ղազարի տպարանը: Մե-

ուած է 1844ին, Պոլիս:

— Պօղոս Զօհրապեան. վկայուած է Անգլիոյ էտրինպուրի Համալսարանէն 1832ին: Հրաւիրուած է պաշտօնապէս ծառայելու Պոլսոյ կայսերական բժշկական Համալսարանը: Եղած է Օսմանեան աւագանիի նախամեծար բժիշկը եւ նշանակուած է Եգիպտոսի փոխարքայ Խտիւ Իսմայիլ փաշայի անձնական բժիշկ: Բժ. Զօհրապեան մահացած է 1883ին:

— Յակոբ Տաւուտեան. վկայուած է 1839ին Իտալիոյ Բիզայի բժշկական Համալսարանէն: Վերադառնալով Պոլիս, նշանակուած է փրոֆեսէօր կայսերական զինուորական բժշկական վարժարանին: 1865ին, պատասխանատու բժիշկ պաշտօնին հրաւիրուած է Ս. Յակոբ հիւանդանոց-անկեղանոցէն: Բժ. Տաւուտեան եղած է եղբայր Լեոնալիբանանի Ա. կուսակալ եւ ընդհանուր կառավարիչ Կարապետ Արթին Փաշա Տաւուտեանի եւ 1861ին դարձած է իր եղբոր առողջապահական տեսուչը եւ խորհրդականը: Մահացած է 1878ին:

— Սերվիչէն. վկայուած է 1840ին, իր ուսումը ստացած է Փարիզ եւ Բիզայի Համալսարաններուն մէջ: Վերադառնալով Պոլիս, անուանուած է «Բժշկապետ Սպարապետի դրան» եւ 40 տարիներ ամբողջ, եղած է կայսերական զինուորական բարձրագոյն վարժարանին բժշկապետը: 1865ին, աղիտալի քոլերայի Համաճարակին, Պոլսոյ մէջ պայքարած է այս հիւանդութեան դէմ իր հմտութեամբ: Բժ. Սերվիչէն եղած է Ազգային Սահմանադրութեան հիմնադիր անդամներէն մին եւ Սուրբ Փրկիչ հիւանդանոցի բարերար հրեշտակ մը: Ունեցած է կարեւոր երկասիրութիւն մը՝ «Մանկատաճութիւն», որ լոյս տեսած է 1844ին, մանուկներու առողջապահական խնամատարութեան Համար: Ան արժանացած է պետական պատուանշաններու եւ եղած է անդամ Օսմանեան ծերակոյտին: Մահացած է 1897ին Պոլիս:

— Ստեփան Արսլանեան. վկայուած է 1847ին եւ մասնագիտացած է Վիեննայի Համալսարանին մէջ: Ծառայած է երկար տարիներ Օսմանեան բանակին մէջ, ստանձնելով պատասխանատուի պաշտօններ զինուորական հիւանդանոցին մէջ եւ բժշկական վարժարանին մէջ: Բժ. Արսլանեան ունեցած է պատասխանատու պաշտօններ՝ Ազգային Սահմանադրութիւնը պատրաստող յանձնախումբի անդամ եւ ատենապետ Ազգային ընդհանուր ժողովին 1875-1880: Մահացած է 1901ին, Պոլիս:

— Նահապետ Ռուսինեան. վկայուած է 1851ին, վերադառնալով Պոլիս, կը ստանձնէ բժշկական զանազան պետական պատասխանատու պաշտօններ: Եղած է անձնական բժիշկը Ֆուատ փաշային եւ ընկերակցած է փաշային, Լեոնալիբանանի քաղաքացիականի պատերազմի իբր լիազօր պատուիրակ, Լեոնալիբանան կեցութեան ընթացքին: Բժ. Ռուսինեան Լեոնալիբանանէն վերադարձին այցելած է Կիլիկիա եւ հոն, ներշնչուած Կիլիկիոյ փառաւոր անցեալէն, հեղինակած է «Կիլիկիա» երգը, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մաղթերգն է: Բժ. Ռուսինեան բժշկութեանէ աւելի կլանուած է ազգային կեանքով եւ ամբողջութեամբ նուիրուած է ազգային զարթօնքին: Մահացած է 1876ին:

— Անդրանիկ Փաշա Կրճիկեան, վկայուած է 1856ին Պոլիս, սակայն մասնագիտացած է Փարիզի մէջ: Վարած է պատասխանատու պաշտօններ Պոլսոյ զինուորական բժշկական վարժարանին մէջ, 1884ին տիրացած է Պետական «Փաշայութեան» եւ նշանակուած է փոխ-տնօրէն բժշկական վարժարանին: Հրատարակած է առողջապահական գիրքեր եւ բնագիտութեան դասագիրքեր: Մահացած է 1894ին:

— Միքայէլ Խորասանճեան. վկայուած է Փարիզէն 1859ին: Վերադառնալէ ետք Պոլիս, ստանձնած է պետական պաշտօններ եւ պահած՝ փրոֆեսօրի տիտղոս, ամբողջ 29 տարիներ, կայսերական բժշկական վարժարանին մէջ: Երկար տարիներ եղած է Սուլթան Համիտ Բ-ի պալատական վստահելի բժիշկը, արժանացած է օսմանեան բարձրագոյն շքանշաններու եւ տիտղոսներու: Բժ. Խորասանճեան յատկապէս մեծ ծառայութիւն ունեցած է Սուրբ Փրկիչ հիւանդանոցին, որուն ղեղարանը կառուցուած է իր կտակով, 1906ին: Մահացած է 1903ին, Պոլիս:

— Յակոբ Պէյ Խանտանեան. վկայուած է 1860ին: Աշխատած է զինուորական բժշկական վարժարանը եւ դասախօսած է բժշկական օրինագիտութիւն, թրքերէն լեզուով: Բժ. Խանտանեան հրատարակած է Օրինական քիմիաբանութեան եւ Օրինական բժշկագիտութեան դասագիրքեր: Մահացած է 1899ին, Պոլիս:

— Գաբրիէլ Սեւեան. վկայուած է Պոլսոյ զինուորական բժշկական վարժարանէն 1849ին: Ծառայած է թրքական բանակին մէջ եւ քանիցս ճամբորդած է Եգիպտոս եւ Լիբանան զինուորական-բժշկական առաքելութեամբ: Ստացած է բարձրագոյն զինուորական աստիճան եւ «փաշայութիւն» իր ծառայութիւններուն համար: Բժ. Սեւեան եղած է հմուտ գրագէտ եւ արժանացած է օսմանեան բարձրագոյն շքանշաններու: Մահացած է 1905ին, Պոլիս:

— Տիգրան Փաշա Փէշտրմալճեան. վկայուած է Փարիզի բժշկական համալսարանէն, 1867ին: Վերադառնալէ ետք Պոլիս, ծառայած է իր ազգին եւ թուրք ժողովուրդին: Գնահատուած է Սուլթան Համիտի կողմէ, որ զինք նշանակած է կայսերական պալատին խորհրդատու բժիշկ: 1892ին կը շնորհուի «Փաշայութիւն» տիտղոսով: Հեղինակած է «Առողջապահութիւն եւ տածումն առաջին ու երկրորդ Մանկութեան» 3 հատորեայ գիրքը՝ 1880ին, եւ «Պատմութիւն մարդկային պատուաստման»՝ 1883ին: Մահացած է 1894ին, Պոլիս:

Պոլսէն դուրս, այլ հայ գաղութներու մէջ, անուանի հայ բժիշկներ իրենց հետքը ձգած են պատմութեան մէջ եւ մեծապէս գնահատուած են իրենց ապրած երկիրներուն մէջ:

— Եաշքիէվիչ Յովհաննէս. վկայուած է Վիեննայի բժշկական համալսարանէն 1775ին: Հաստատուած է Լեհաստան եւ դարձած է արքունի բժշկապետ: Հիմնած է տարրագիտական աշխատանոց մը եւ բնագիտարան մը: Բժ. Եաշքիէվիչ մեծ ծառայութիւններ մատուցած է Լեհաստանի մէջ, որպէս կարող եւ մասնագէտ բժիշկ: Եղած է Վիեննայի եւ Փարիզի բժշկական ակադեմի-

իաներու անդամ:

— Երուանդ Արսլանեան. բնիկ խարբերդցի, վկայուած է Իտալիոյ Փատովայի բժշկական համալսարանէն 1889ին: Հաստատուած է Փատովա եւ ծառայած նոյն համալսարանին մէջ, որպէս մասնագէտ քիթ-կոկորդ-ականջ հիւանդութիւններու: Եղած է համաշխարհային մասնագէտ-նշանաւոր բժիշկ եւ ճանչցուած է որպէս «բժիշկ Արսլան»:

— Դաւիթ Դաւիթեան. ծնած է 1768ին, Կալկաթա, Հնդկաստան: Վկայուած է Կալկաթայի բժշկական համալսարանէն եւ ծառայած է Հնդկա-անգլիական զօրաբաժիններու մէջ: Նախախնամական դեր կատարած է քոլերայի համաճարակը կասեցնելու համար Հնդկաստանի մէջ: 1823ին պատրաստած է գիտական ուսումնասիրութիւն մը քոլերայի մասին: Յաւելիալ մասնագիտութեան մարմանով ուղղուած է Անգլիա, եւ վերադարձին հաստատուած է Պարսկաստան եւ կարգուած Ֆաթալի Շահի կողմէ՝ արքունի բժիշկ եւ արժանացած՝ «Խան» աստիճանին եւ «Առիւծ արեգական» պատուանշանին: Մուհամէտ Շահին կողմէ նշանակուած է Արքունի բժիշկ: Բժ. Դաւիթեան կարգուած է բժշկապետ Սպահանի կուսակալութեան եւ հաստատուած է Նոր Ջուղա, ուր տեղացիներու կողմէ կոչուած է «բժիշկ Աստուածախնամ»: Մահացած է Պարսկաստան:

— Ստեփանոս Յովսէփեան-Մանուկեանց: Ծնած է Կալկաթա, Հնդկաստան, 1840ին: Վկայուած է Լոնտոնի Արքայական բժշկական համալսարանէն, 1862ին: Վերադառնալով Կալկաթա, մտած է պետական ծառայութեան մէջ, որպէս բժիշկ եւ քաղաքապետի փոխանորդ: Արժանացած է Անգլիական կառավարութեան գնահատագիրներու իր ցուցաբերած ճարտարութեան եւ անձնուիրութեան համար: Բժ. Մանուկեանց ունեցած է ազգային բեղուն գործունէութիւն: Ան զարկ տուած է Կալկաթայի հայ գաղութի «Մարդասիրական ճեմարանին», որ եղած է հայապահպանումի կարեւոր օճախ մը:

Վերոյիշեալ հայ բժիշկները, 18րդ եւ 19րդ դարերուն, հայ գաղութներու մէջ գործող հայ բժիշկներուն մէկ մասը կը կազմեն: Եղած են շատ աւելի մեծ թիւով հայ բժիշկներ հայկական գաղթօճախներու մէջ, որոնք բոլորն ալ ստացած են իրենց բժշկագիտութիւնը Եւրոպայի յայտնի բժշկական համալսարաններու մէջ: Ասոնցմէ շատեր չգոհանալով բժշկական վկայականով, շարունակած են իրենց ուսումը եւ հետեւած են մասնագիտական բժշկական կրթութեան: Անոնք դարձած են հանրաժանօթ, իրենց ապրած երկիրներուն մէջ եւ արժանացած են պատուաբեր գնահատանքի, իրենց անսակարկ ծառայութեան եւ բժշկական նուաճումներուն համար:

Հոս պէտք է յիշել որ 15-18րդ դարերուն Հայաստանէն դուրս, արտասահմանի հայկական գաղութներուն մէջ հիմնուած են բժշկական բազմաթիւ հաստատութիւններ եւ դարմանատուն-հիւրանոցներ, յիշենք մի քանին.

1. 1624ին, Լեհաստանի Լվով քաղաքին մէջ բացուած է հայկական հիւանդանոց մը:

2. 18րդ դարուն, Հնդկաստանի Մատրաս քաղաքին մէջ հիմնուած է հայկական հիւանդանոց մը:

3. 1801ին, Իզմիրի մէջ, նախապէս գտնուող ժանտախտի դարմանատունը փոխարինուած է հիւանդանոցին, սքանչելի կառույցով մը, որ գործած է մինչեւ 1922:

4. 18րդ դարուն, բարեսիրական հայկական միութիւններ հիմնած են Պոլսոյ մէջ, կաթողիկէ համայնքի հիւանդանոցը:

5. 1832ին, Պոլսոյ մէջ կառուցուած է Ազգային հիւանդանոցը, Սուրբ Փրկիչ առաքելական համայնքին կողմէ եւ որ կը գործէ մինչեւ մեր օրերը: Աբ. Փրկիչ հիւանդանոցը հիմնադրուած է Հ. Պեղծեանի նախաձեռնութեամբ եւ նրա կողմէ:

Բժ. Կարպիս Հարպոյեան

Օգտագործուած Աղբիւրներ

1. - «Ասար Սեբաստացիի բժշկարանը», Կ. Յ. Բասմանեան, 1932, Փարիզ:
2. - Փարիզի հայ բժշկական միութիւնը, Տոբ. Հ. Եազմանեան, 1932, Փարիզ:
3. - Հայոց նպաստը աշխարհի քաղաքակրթութեան-բժշկութեան, Վերապատուելի Եղիա Ս. Քասունի, Ջանասէր, 2001, Պէյրութ:
4. - Հայ բժշկութեան պատմութիւնը եւ հայ-արաբ բժշկական դպրոցներու կապերը, Բժ. Ռոպեր ձէպէնեան, 1968, Պէյրութ:
5. - Հայկական Սովետական համայնագիտարան, Երեւան, 1960:
6. - Հայկական բժշկութիւնը եւ Միջին Արեւելի, Մ. Պոյանեան, 1998, Պէյրութ:
7. - «Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկներ», Տոբ. Գասպար Մ. Կարոյեան, 1957, Պոսթըր:
8. - «Աշխարհի Լոյսն ի հայս», Գարեգին Եպիսկոպոս Տրապիզոնի Խաչատուրեան, 1936, վերահրատարակուած Անթիլիաս, 1988ին: